

3569

281-6  
U-51

1928



# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՔԱՂՈՒԱԾ)

Գումարեալ ի նիու եսրի

7 - 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1928

(261)

281.6

Q-51



39



11



281-6  
Կ-51

27385-4.3

### ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՅ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ  
ԳՈՒՄԱՐՈՒԹ 1928 ՀՈԿՏ. 7-8

ՆԻՌԱ ԵՈՐՔԻ Ս. ԼՈՒՍԱՅՈՐՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵԿՈՎ ՍՐԱՀԻՆ ՄԵԶ

— — —

### ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎԻ

Ամերիկայի Առաջնորդական Վիճակին Երեսփոխանական Ժողովի 1928 տարուան Նիստը բացուեցաւ Հոկտ. 7-ին, Կիրակի, Կէսօրէ վերջ ժամը 1-ին, ՆիՌԱ ԵՈՐՔԻ Ս. ԼՈՒՍԱՅՈՐՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵԿՈՎ սրահին մէջ:

Առաջնորդ Տ. Տիրայր Արքեպիսկոպոս Յովհաննէսեանի բացակայութեան պատճառու ժողովին նախագահութեան կոչուեցաւ Արժանապատիւ Տ. Սերովիէ Աւադ Քահանաւ Ներշապուհ, որպէս Երիցազոյնը ներկայ Եկեղեցական Երեսփոխաններուն:

Արժանապատիւ նախագահէր ժողովը բացաւ աղօթքով:

### ԱՌՋԱՄԱՅԵԱՅ ԴԻՒԱՅՆ

Զեռամբարձ քուէարկութեամբ առժամեայ ատենապետ Ենտրուեցաւ Պարոն Արամ Ճէրահեան, առժամեայ ատենապետիր՝ Պարոն Գարեգին Տէր-Ղազարեան:

ՃՇՏՈՒՄ ՄԱՍԱԿՑՈՂ ԹԵՄԵՐՈՒ, ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ ԹԻՒԻՆ ԵՒ ՎԱԼԻԵՐԱԳՐԵՐՈՒ

Նոր Երեսփոխաններու վաւերագրերը քննելու եւ մասնակցող թեմերու ու Երեսփոխաններու թիւը ճշգելու համար որոշուեցաւ կազմել Երեք անդամներէ բարկացեալ յանձնաւումը մը, որուն անդամ ընտրուեցան հետեւեալները ճեղամբարձ քուէարկութեամբ:

Պարոն Տիգրան Մմսարեան

Պարոն Տիրան Փաշալեան

Պարոն Մարկոս Տէր-Մանուէլեան

Կարձ գաղարէ մը յետոյ, Յանձնախումբին տեղեկարերը, Պարոն Տիրան Փաշալեան, ծանոյց ժողովին թէ հետեւեալ յաւելումները եւ փափոխութիւնները եղած են Երեսփոխանական ժողովի կազմին վրայ:

1. Կլիվլենդի թեմը, որ ցարդ Երեսփոխան չունէր, ընտ-



6278-57

բած էր իր երեսփոխանը յանձին Պարոն Հայկ Խօճասար-  
հանի:

2. Դիարոյլիտի երկու երեսփոխանները, Պ. Պ. Արիկ  
Գալֆայեան եւ Արմենակ Նազար Հրաժարած ըլլալով, անոնց  
տեղ ընտրուած էին Պ. Պ. Յովհան Կարպետեան եւ Տիրան  
Փաշալեան:

3. Նիւարքի երեսփոխանը, Պարոն Տիրան Քըրք Հրա-  
ժարած էր եւ անոր տեղ ընտրուած Պարոն Տիգրան Բարու-  
հակեան:

4. Բոստոնի Երեսփոխաններէն մին, Պարոն Կարօ Սա-  
հակեան, Հրաժարած ըլլալով, անոր տեղ ընտրուած էր Պ.  
Մուրատ Մուրատեան:

5. Պրովիդենսի Երեսփոխաններէն մին, Պարոն Գաս-  
պար Ռասիկեան, չկրնալով ներկայ զանուիլ Երեսփի. Ժողո-  
վի այս նիստին, Հոգաբարձութիւնը անոր փոխանորդ կար-  
գած էր Պարոն Գալբեան:

6. Հարափորդի Հոգաբարձութիւնն ու Երեսփոխան Պ.  
Արմենակ Տէրտէրեան, Համաձայնած էին որ Ժողովի այս  
նիստին Տէրտէրեանի ձայնը փոխանորդաբար ներկայացնէ  
Դոկտ. Գեւոնդ Աճէմեան:

7. Պորտենդի Հոգաբարձութիւնն ու Երեսփոխան Պըն.  
Գէորգ Տէր-Արսէնեան ծանուցած էին թէ Պարոն Տէր-Արսէն-  
եան պիտի չկրնար ներկայ զանուիլ Ժողովի այս նիստին և  
փոխանորդ կարգած էին Պարոն Հրահատ Հողկրողեանը:

8. Դելրէ-Դիարոյլիտի Հովիւը, Տ. Մովսէս Քահանայ  
Տէր-Ստեփանեանը, փոխանորդ կարգած էր Պարոն Գառնիկ  
Գաֆաֆեան:

9. Գրանիտ Սիտիի Հովիւը, Տ. Դաւիթ Քահանայ Տէր-  
Աւետիսեան, փոխանորդ կարգած էր Պարոն Արտաւազդ  
Գույշումճեանը:

10. Բէյսինի Հոգաբարձութիւնը ծանուցած էր որո-  
շած է մասնակցիլ Երեսփի. Ժողովին եւ Երեսփոխան ընտրած  
էր Պ. Պ. Կարպետ Աճէմեան եւ Հայկ Շըքլեան:

11. Վեստ Պուլմլընի Հովիւ, Տ. Գարեգին Քահանայ Յո-  
վակիմեան, փոխանորդ կը կարգէր Պարոն Յովհաննէս Թո-  
րիկեան:

12. Բոստոնի Հովիւ, Տ. Շահէ Ծ. Վարդապետ, փոխա-  
նորդ կը կարգէր Պարոն Վահան Քիւրքճեան:

13. Սառւթ Միլուսկիի Հովիւ, Տ. Խորէն Վարդապետ  
փոխանորդ կը կարգէր Պարոն Տիգրան Արսլանեան:

Յանձնախումբը որեւէ ապօրինութիւն գտած ըլլալով  
այս ընտրութեանց եւ անուանումներուն մէջ, կը յանձնա-  
բարէր վաւերացնել զանոնք:

Երեսփոխանական Ժողովը միաձայնութեամբ հաւանե-  
ցաւ:

Տեղեկաբերը ծանոյց նաեւ թէ՝ Համիլտոնն կանադայի  
Երեսփոխանը, Պարոն Աեւտիս Սէլեան, փոխանորդ կարգած  
էր Պարոն Ներսէս Փափաղեանը, բայց որովհետեւ որոշ ա-  
պացոյց եւ հաւաստիք չկար թէ Համիլթոննի Հոգաբարձու-  
թիւնը հաւանած էր այս կարգադրութեան, Յանձնախումբը  
խնդիրը կը բերէր Ժողովին ուշագրութեան: Ժողովը օրի-  
նական չգտաւ Երեսփոխանի մը կողմէ եւ առանց Հոգաբար-  
ձութեան գիտակցութեան կատարուած այս անուանումը եւ  
չվաւերացուց զայն:

Տեղեկաբերը Ժողովին ուշագրութեան յանձնեց նաեւ  
հետեւեալ խնդիրը...

Բինդիսմալնի Հոգաբարձութիւնը 28 սեպտեմբեր թուա-  
կիր նամակով մը ծանուցած էր Կեղրոնական Վարչութեան  
թէ իր Երեսփոխանն ընտրած էր յանձին Պարոն Վահան Արս-  
լանեանի: Հոկտ. Յ թուակիր հեռագրով մը, որ կ'ենթա-  
զրութէր քաշուած ըլլալ Հոգաբարձութեան կողմէ, կը ծա-  
նուցուէր Առաջնորդաբանին թէ Վահան Արսլանեանի ընտ-  
րութիւնը հետեւանք էր անունի շվոթութեան մը, Երեսփո-  
խան ընտրուած էր Պարոն Լեւոն Պահաւոր եւ թէ լրացուցիչ  
տեղեկութիւններ պիտի տրուէին յիտոյ: Յանձնախումբը  
նկատելով որ խոստացուած լրացուցիչ տեղեկութիւնները  
չեն հասած, թելագրեց ընդունիլ Պարոն Վահան Արսլանեա-  
նը իբր Երեսփոխան Բինդիսմալնի, եւ Ժողովը հաւանեցաւ:

Պարոն Փաշալեանի տեղեկատուութենէն յայտնուեցաւ  
որ Ժողովին կը մասնակցէին 25 թեմեր. չմասնակցող թիւ-  
մերու թիւն էր 7:

ՅԱՆԿ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒԻ

### ՈՒՍՏՀՐ

1. Աթիկ Քահանայ Ծոցիկեան
2. Գարեգին Տէր-Ղաղարեան
3. Սարգիս Եաղուպեան

### ԻԻՆԻԹՆ ՄԻՏԻ

4. Մամբրէ Վարդապետ Գալֆայեան
5. Յ. Գարակօղեան
6. Յ. Ապահունի
7. Տիգրան Սմուարեան

### ՆԻՋԻ ԵՈՐԿ, Մայր Եկեղեցի

8. Սերովրէ Քահանայ Ներշապուհ
9. Գետրոս Քահանայ Յակոբեան
10. Սեպուհ Սերճենեան
11. Խոսրով Պապայեան
12. Դոկտ. Մ. Արգարեան

### ՆԻՋԻ ԵՈՐԿ, Ս. Լուսաւորիչ Եկեղեցի, 30-րդ Փողոց

13. Յարութիւն Քահանայ Սարգիսեան
14. Մուշեղ Պէյլէրեան
15. Արմենակ Բոցիկեան
16. Ախմոն Պարզեւ
17. Յ. Ալպարեան

### ԹՐԱՅ

18. Եղիշէ Քահանայ Գալչընճեան
19. Յակոբ Աղաղարմ
20. Թորոս Տէր-Գետրոսեան
21. Յարութիւն Ճափերեան

### ՊՐՈՎԻԴԵՆՍ

22. Ղեւոնդ Վարդապետ Մարգուկէսեան
23. Նշան Գղիրեան
24. Սարգիս Նահարեան
25. Դոկտ. Խ. Էմիրպեան
26. Պապա Գալընեան

### ՄԻՐԱԿԻՒՄ

27. Շմաւոն Գալէմեան

### ԲՈՍՏՈՒ

28. Հմայեակ Հապէչեան
29. Սարգիս Կիւրեղեան
30. Մուրատ Մուրատեան
31. Վահան Քիւրքճեան, ի տեղի Շահէ Յ. Վարդապետ Գասպարեանի

### ՖԻԼԱԴԵԼՖԻԱ, Արեւմտ. Թեմ

32. Արոէն Քահանայ Թորոսեան
33. Արամ Ճէրահեան

### ՖԻԼԱԴԵԼՖԻԱ, Հիւս. Թեմ

34. Նշան Քահանայ Փափաղեան
35. Արտաշէս Յովաէփեան
36. Կարապետ Օվանեան

### ՎԵՍՏ ՊԱԻԼՄԸՆ

37. Մաղաք Գ. Պէրպէրեան
38. Յովհաննէս Թորիկեան, ի տեղի Գարեգին Քչնյ. Յովհակմեանի

### ՆՈԽԻ ԲՐԵՏԵՅՑՆ

39. Բնձակ Քահանայ Գաղանճեան
40. Կիրակոս Յակոբեան
41. Գարեգին Գէորգեան

### ԼԱՎԵԼ

42. Եղիշէ Քահանայ Գասպարեան
43. Մարկոս Տէր-Մանուէլեան

### ԸՈՐՏԵՆԴ

44. Հրահամ Հողկրողեան, ի տեղի Գէորգ Տէր-Արսէն-եանի

### ՇԻԿԱԳԻ

45. Սեղբակ Տէր-Պաղտասարեան

### ԴԻՏՈՑԻՏԵԼԻՑ

46. Գառնիկ Գափափեան, ի տեղի Մովսէս Քչնյ. Տէր-Մտեփանեանի

### ՍՈՒԻԹ

47. Դոկտ. Մ. Գարակօղեան

### ՄԻԼԱԲԻ

48. Տիգրան Արսլանեան, ի տեղի Խորէն Վարդապետ Լաղարեանի

49. Սիսակ Նալբանդեան

## ԳՐԱՆԻՑ ՍԻԾԻ

50. Արտաւազդ Գույսումձեան, ի տեղի Դաւիթ Քչնյ.  
Տէր-Աւետիսեանի  
51. Գալուստ Մարտիկեան

## ՆԻՌԻԱՐԿ

52. Գետրոս Քահանայ Վարդանեան  
53. Տիգրան Բարունակեան

## ՆԻՎԻԱՐԱ ՑՈԼԱ

54. Վահան Աճէմեան

## ՐԵՑՍԻՆ

55. Կարապետ Աճէմեան  
56. Հայկ Շըռլըւեան

## ԴԻՑՐՈՅԻՏԻ

57. Յովհան Կարապետեան  
58. Տիրան Փաշալեան

## ԱՍՏՈՐԻԱ

59. Մատթէոս Քահանայ Հէքիմեան  
60. Գետրոս Հազարապետեան

## ՀԱՐՏՁՈՐՏ

61. Դոկտ. Ջեւոնդ Աճէմեան, ի տեղի Արմենակ Տէր-  
տէրեանի

## ԷՒՆԳՃԵՄՑԼՆ

62. Վահան Արսլանեան

## ԲԱՅԱԿԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ

- Մանուկ Փերեցեան, Բիշմընտ
- Միամբ Պոյաձեան, Լօրենս
- Կարապետ Ենիկոմշեան, Ապրինդֆիլդ
- Աւետիս Սէլեան, Համիլտոն, Կանադա
- Գ. Քչնյ. Մամուէլեան, Սաո-Պուտ, Բրազիլիա
- Գ. Քչնյ. Պարասաթեան, Բուէնոս Այրէս, Արժան-  
տին
- Յ. Քչնյ. Ամիրեանց, Բուէնոս Այրէս, Արժան-
- Գուրգէն Քչնյ. Թաշճեան, Կորդովա, Արժանտին
- Վահան Քչնյ. Կիւլտալեան, Շիկագո
- Վարդան Քչնյ. Դաւթեան, Բէյսին

- Պետրոս Քչնյ. Մամբրէեան, Դիտրոյիտ
  - Դոկտ. Վուամ Նետիւրեան, Ֆիլադելֆիա, Արէւ-  
մըտեան թէմ:
- ՄԱՅԱՅՈՒՆ Դիմանի ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Ժողովը որոշեց որ Կեղրոնական Վարչութեան անդամ-  
ները Երեսի. Ժողովի մնայուն դիւանին անդամ չըլլան,  
յիաոյ յանձնարարեց վաւերադրերը քննող յանձնախումբին  
բերել երկու ցանկեր, մին Ա. և Բ. ատենապետներու, միւ-  
ուր Ա. և Բ. ատենապիրներու ընտրութեան համար: Յանձ-  
նախումբը ներկայացուց հետեւեալ ցանկերը -  
Ատենապետութեան Թէկնածուներ.

- Յովհան Կարապետեան
- Մարկոս Տէր-Մանուէլեան
- Տիգրան Արսլանեան
- Մեդրակ Տ. Պաղտասարեան

Ատենապետութեան Թէկնածուներ.

- Գարեգին Տէր-Ղազարեան
  - Յովհաննէս Թոորիկեան
  - Տիրան Փաշալեան
  - Կարապետ Օղանեան
- Որոշուեցաւ որ ատենապետութեան ցանկին վրայէն ա-  
յնէն բարձր քուէ ստացողը ըլլայ Ա. Ատենապետ, յաջորդ  
առաւելագոյն քուէ ստացողը Բ. Ատենապետ: Նոյն որոշու-  
մը տրուեցաւ Ա. և Բ. ատենապիրներու մասին: Ապա տե-  
ղի ունեցաւ գաղտնի քուէարկութիւն, որուն արդիւնքը ա-  
հաւասարիկ -

- |                             |         |
|-----------------------------|---------|
| Պարոն Մարկոս Տէր-Մանուէլեան | 34 քուէ |
| Պարոն Յովհան Կարապետեան     | 27 քուէ |
| Պարոն Տիրան Փաշալեան        | 35 քուէ |
| Պարոն Գարեգին Տէր-Ղազարեան  | 27 քուէ |
- Բայտ այսմ մնայուն դիւանը կազմուեցաւ հետեւեալ  
կերպով -
- |  |
|--|
| Պարոն Մարկոս Տէր-Մանուէլեան, Ա. Ատենապետ |
| Պարոն Յովհան Կարապետեան, Բ. Ատենապետ     |
| Պարոն Տիրան Փաշալեան, Ա. Ատենապիր        |
| Պարոն Գարեգին Տէր-Ղազարեան, Բ. Ատենապիր  |

## ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

1. Տեղեկագիր Առաջնորդ Ս. Հօր - Ժողովն սկսու իր կամոնաւոր աշխատութեանց ատենապետութեամբ Պարոն Մարկոս Տէր-Մանուէլեանի:

Օրակարգի վրայ էր Առաջնորդ Տ. Տիրայր Արքեպիսկոպոսի տեղեկագիրն ամբողջութեամբ կամ ամփոփումով կարգալու հարցը: Ժողովը նկատելով որ տեղեկագիրը չատ ընդգարձակ էր և անոր ամբողջական ընթերցումը պիտի խլէր իր սուլ ժամերը, որոցից կարմել երեք հոգիէ բաղկացեալ յանձնախումբ մը, որ ամփոփումը տար տեղեկագրին, պայմանաւ սակայն, որ Նորին Սրբազնութեան արդարութիւն մը ըրած ըլլալու համար՝ կարգացուէր հրաժարականին մասը ամբողջութեամբ: Յանձնախումբին անդամ ընտրուեցան, Պ. Պ. Ա. Բոցիկեան, Յովհան Կարապետեան և Արտաւազդ Գուշումձեան:

2. Տեղեկագիր Կրօն. Ժողովի - Կրօնական Ժողովի տեղեկագիրը կարգաց Տ. Մերովը Քչնյ. Ներշապուհ և ընդունուեցաւ ի գիտութիւն:

3. Տեղեկագիր Կեդր. Վարչութեան - Աղջային Կեդրունական Վարչութեան տեղեկագիրը կարգաց Պարոն Խոսրով Պապայեան և ընդունուեցաւ ի գիտութիւն:

Նիստը վակուեցաւ երեկոյեան ժամը 6:30-ին, մէկ ժամէն վերսկսելու որոշումով:

## ՆԻՍՏ Բ.

Երեսփոխանական Ժողովի երկրորդ նիստը բացուեցաւ Հոկտեմբեր 7-ին, երեկոյեան ժամը 8-ին, ատենապետութեամբ Պարոն Մարկոս Տէր-Մանուէլեանի:

Պատկանեալ յանձնախումբը հրաւիրուեցաւ տալու Առաջնորդ Ս. Հօր տեղեկագրին ամփոփումը: Տեղեկաբերը, Պարոն Յովհան Կարապետեան, յայուարարեց թէ տեղեկագիրը կատարեալ եւ մանրազնին պատկերացումն էր Նորին Սրբազնութեան վերջին տասնվեց ամսուան գործունէութեան և ամերիկահայ գաղութին ներկայ վիճակին ու պահանջներուն: Ապա Պարոն Տիրան Փաշալեան ամբողջութեամբ կարգաց տեղեկագրին հրաժարականի վերաբերեալ գլուխը:

Երեսփոխանական է սմանք բացատրութիւն պահանջեցին Կեդր. Վարչութենէն այն նամակներուն վերաբերմամբ, որուն Կրօնական Ժողովը Առաջնորդ Ս. Հօր գործակիցութեամբ դրկած էր Կաթողիկոսին Սահմանադրութեան Ուրուագծին, և Շարժական Վիմի մասին: Տրուած բացատրութիւններէն պարզուեցաւ որ, այդ նամակներն էին որ պատճառ եղած էին տարակարծութեանց ընդմէջ Կեդր. Վարչութեան աշխարհական անդամներուն և Կրօնական Ժողովին ու Առաջնորդին եւ յառաջ բերած Նորին Սրբազնութեան հրաժարականն ու ձեռնթափութիւնը: Այս առթիւ կարգացուեցաւ Տ. Տիրայր Արքեպիսկոպոսի հետեւեալ հրաժարագիրը -

1928, Օգոստ. 14  
Նիւ Եորի

Ազգային Կեդրոնական Ժողովի  
Մեծարոյ Վարչութեան

Ամերիկայի Հայ Եկեղեցուն ծառայելու կոչուած եւ սիրով ընդունած ենք այդ իրաւերը:

Մեր ցանկութիւնն է եղած եւ է ծառայել եւ ծառայութիւնն բերել գործին մինչ այն պահը, երբ կը տեսնենք, որ Եկեղեցու մեծ գործը չի տուժեր:

Վերջնի պարզ ու աներկբայ զիտակցութիւնն ունենալով, այլ եւս Մեզ համար հնարաւորութիւն չենի համարեք ընտրել մնալու Մեր պաշտօնին մէջ իբրև Առաջնորդ Ամերիկեան Հայ Եկեղեցու, ուստի կ'առաջարկենի ի կատար ածել Սահմանադրութեան յօդուած 7-ը:

Օրինելով զզեզ ամենքդ, Մեր սրտագին շնորհակալիքը յայտնելով ամենքիդ, թէ Կրօնական Ժողովի Հայ եւ Տիրապետական Ժողովի Մեր հոգեւոր զաւակներուն, որոնք բանեցան ու տքնեցան Մեզ հետ ի շահ Հայ Եկեղեցոյ:

Օրինելով նաև Մեր Հոգեւոր տեսչութեան յանձնելուած բոլոր ամձերը, Հոգեւորական թէ աշխարհական, որոնք Մեզ հետ էին, գործակից Մեր շանիքուն, բանիւ թէ արդեամբ:

Մաղրելով ի սրտէ լաւագոյն օրեր եւ աւելի յու-  
սալից շրջան յապագային

Կամք Հայրական Օրինութեամբ, Սիրով  
ջերմ աղօք քով ամենի ու ամենի համար

ՏԻՐԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒՍ

Միաբան Մայր Աքռոյ Սրբոյ Էջմիածնի

Խնդիրը լուսարանելու նպատակով կեզր. Վարչութեան  
ատենապիրը, Պարսն Խոսրով Պապայեան կարդաց հետեւ-  
եալ գրութիւնները:-

1. Պատճէնը կեզր. Վարչութեան 8 Մայիս, 1928 թուա-  
կիր, Համար 924 նամակին, որով երկրորդ անգամ ըլլալով  
Ամենայն Հայոց Կաթողիկոսէն արտօնութիւն կը խնդրուէր  
Շարժական Վեմի գործածութեան:

2. Պատճէնը 22 Մայիս, 1928 թուակիր Համար 962 նա-  
մակին, որով Կրօնական Ժողովը Շարժական Վեմի գործա-  
ծութիւնը հակառակ կը գտնէր Հայ Եկեղեցւոյ կանոններուն  
եւ կը խնդրէր Վեհափառ Կաթողիկոսէն չնորհել կեզր. Վար-  
չութեան կողմէ խնդրուած արտօնութիւնը:

3. Պատճէնը կեզր. Վարչութեական 5 Յունիս, 1928 թուա-  
կիր, Համար 1066 գրութեան, որով կը խնդրուէր Վեհափառ  
Կաթողիկոսէն հաստատել նոր սահմանադրութիւնը եւ շու-  
տով վելաղարձնել իր հրահանդներուն հետ ի գործադրու-  
թիւն:

4. Պատճէնը Կրօնական Ժողովի 30 Յունիս, 1928 թուա-  
կիր, Համար 1342 գրութեան, որով Կրօնական Ժողովը կը  
ծանուցանէր Վեհ. Կաթողիկոսին թէ նոր սահմանադրութեան  
մէջ կապուած են հոգեւորականներու իրաւասութիւնները,  
Կրօնական Ժողովը գարձած է կեզր. Վարչութեան ստորա-  
դաս եւ նշանակովի մարմին մը, կեզր. Վարչութեան մէջ  
երկու աթոռ միայն տրուած է հոգեւորականներուն, եւ կը  
խնդրէր բարեկուսել նոր սահմանադրութեան այդ արամագ-  
րութիւնները: Պատճէնին կցուած էր նաեւ մէկ օրինակը  
սահմանադրական օրինագծի մը, զոր Կրօնական Ժողովը  
զրկած էր Կաթողիկոսին, եւ որ կը պարունակէր Կրօնական  
Ժողովի եւ Առաջնորդ Ա. Զօր տեսութիւնները ու նախասի-  
րութիւնները Ամերիկայի Հայոց նոր սահմանադրութեան  
վերաբերմամբ:

ԱՌ ԱԶՆԱՐԴ Տ. ՏԻՐԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒՍԻ  
ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ

Վերոյիշեալ նամակներու ընթերցումէն եւ թեր ու գէմ  
արտայայտութիւններէ յետոյ Ժողովը նկատի առաւ Առաջ-  
նորդ Ա. Զօր, Տ. Տիրայր Արքեպիսկոպոսի, Հրաժարականը:  
Պարոն Մաղաք Պէրպէրեան առաջարկեց հետեւեալ բա-  
նաձեւը:-

«Երեսփոխանական Ժողովը նկատի ունենալով  
Նորին Սրբազնութեան, Տ. Տիրայր Արքեպիսկոպոսի,  
Հրաժարականը Ամերիկայի թեմին առաջնորդական  
պաշտօնէն եւ խորապէս զնահատելով եօթը տարինե-  
րու ընթացքին անոր թափած ջանքերը եւ աշխատու-  
թիւնները յօդուա Հայ Եկեղեցւոյ զօրացման եւ պայ-  
ծառացման, ցաւ ի սիրտ ընդ առաջ կ'երթայ Նորին  
Սրբազնութեան վափաքին ընդունելով անոր Հրա-  
ժարականը, յայտնելով իր չնորհակալութիւնները  
անոր մատուցած ծառայութեանց համար»:

Ժողովականներէ ոմանք վափաք յայտնեցին որ այս բա-  
նաձեւին քուէարկութիւնը ըլլայ գաղտնի: Ատենապետ Պրն.  
Յովհան Կարապետեան հաւանեցաւ եւ յայտարարեց թէ ա-  
նոնք որ կ'ուզէին ընդունիլ բանաձեւը, քուէարկութիւնը վրայ  
պիտի գրէին «այո», անոնք որ հակառակ էին, պիտի գրէ-  
ին «ոչ»:

Այս հասկացողութենէն յետոյ տեղի ունեցաւ քուէար-  
կութիւնը, համբուեցան ձգուած քուէնները եւ ստուգուեցաւ  
որ քուէարկութեան մասնակցած էին վաթսուն երեսփոխան-  
ներ եւ բանաձեւն ստացած էր երեսունութը դրական եւ քր-  
սաններկու բացասական քուէ: Որով ընդունուեցաւ Ա. Առաջ-  
նորդ Ա. Հրաժարականը, 38 ձայնով յնդպէմ 22-ի, վերո-  
յիշեալ բանաձեւի հիմամբ:

Նիստը վակուեցաւ երեկոյեան ժամը 11.30-ին:

ՆԻՍՏ Գ.

Նիստը բացուեցաւ Հոկտեմբեր 8-ին, երկուշաբթի ցե-  
րեկ, ժամը 10-ին: Ներկայ էին 43 երեսփոխաններ:

Օրսակարգի գլխաւոր Հարցերը կը կազմէին հետեւեալ-  
ները:-

1. Պէտք է արտօնել մկրտութեանց եւ պսակներու կատարուիլը եկեղեցին դուրս .

2. Կիրակի օրեր թաղում , պսակ եւ մկրտութիւն կատարուելու հարցը :

Առաջին հարցին շուրջ տեղի ունեցաւ կարծիքի փոխանակութիւն եւ ժողովը եկաւ այն եղբակացութեան թէ կարելի չէր վերջնական որոշում մը տալ խնդրոյն բոլոր պարագաները ըստ արժանուոյն ուսումնասիրելէ առաջ , եւ որովհետեւ այսպիսի ուսումնասիրութիւն մը կատարել անհնարին երեսփոխանական ժողովին մէջ , որոշուեցաւ այդ պարագանութիւնը թողուլ կեղունական վարչութեան՝ յանձնաբարելով որ ան կատարէ մանրամասն քննութիւն եւ իր եղբակացութեան վրայ հիմնուելով յանդի վերջնական որոշման մը եւ դայն իրը պաշտօնական հրահանդ հաղորդէ հովիւներուն եւ հոգաբարձութիւններուն :

Երկրորդ խնդիրը օրակարգի վրայ դրուած էր , որովհետեւ կրօնական ժողովը արդիւած էր պատկներու եւ թաղումներու կատարումը կիրակի օրեր եւ իր այս արգելքը հաղորդած հովիւներուն եւ հոգաբարձութիւններուն : Միքանի երեսփոխաններ դիտել առուին թէ կրօնական ժողովի այդ որոշումը գործնական չէր եւ յառաջ բերած էր անպատճութիւններ : Երեսփոխանական ժողովը որոշեց վերցնել այդ արգելքը եւ չեղեալ նկատել կրօնական ժողովի որոշումը :

ԱՌ ԱԶՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՌԱԶԻԿԱՅ ՇԲՁԱՆԻՆ ԲԻՒԳՁԷՆ  
ԵՒ

ԶՆԱԽԱՍԵՍՈՒԱԾ ՀԱՐՑԵՐՈՒ ԴԱՍԱԽՈՐԾՈՒՄ

Երազուեցաւ կաղմել երկու յանձնախումբեր , մին Առաջնորդարանի յառաջիկայ տարուան բիւղչէն նախազծելու , միւսը՝ դասաւորելու եւ ժողովին բերելու այն հարցերը , զորս հոգաբարձութիւններ ու երեսփոխաններ առաջարկած էին , եւ որոնք չէին դանուեր օրակարգի վրայ :

Բիւղչէի Յանձնախումբ

Պարոն Սեղբակ Տէր-Պաղտասարեան

Պարոն Տիգրան Բարունակեան

Դոկտոր Մ . Պարակէողեան

Զնախատեսուած Հարցերու Յանձնախումբ

Պարոն Մաղաք Գ . Պէրպէրեան

Պարոն Սարգիս Նամարեան

Պարոն Սիմոն Պարգեւ

Երկու յանձնախումբերուն հրահանդ տրուեցաւ իրենց տեղեկագիրները ներկայացնել յաջորդ նիստին : Մինչ այս ժողովը նկատի առաջ հետեւեալ երկու դրութիւնները .

1. Սառութ Միլուոկիի հովիւր , Տ . Խորէն Վարդապետ Լաղարեան Երեսփոխանական ժողովին ուղղեալ գրութեամբ մը թելաղբութիւններ կ'չնէր ի նորաստ Հայաստաննեաց Եկեղեցւոյ զօրացման եւ բարզաւածման Ամերիկայի մէջ : Գրութիւնը կարգացուեցաւ եւ ընդունուեցաւ ի գիտութիւն եւ յանձնուեցաւ կեղը . Վարչութեան ուշադրութեան :

2. Վօկեղընի հոգաբարձութիւնը հոկտ . օ թուակիր նամակով մը կը ծանուցանէր թէ երեսփոխան ընտրած է Պրն . Հայկ Սմսորեանը եւ կը խնդրէր հրաւերել զայն ժողովին նիստերուն : Եղած տեղեկութիւննը նկատելով որ Վօկեղընի հոգաբարձութիւնը դեռ նոր կաղմուած է եւ տակաւին վաւերացուած չէ , ժողովը չկրցաւ ընթացք տալ եղած առաջարկին :

Նիստը փակուեցաւ ժամը 1-ին :

ՆիՍՏ Գ .

Նիստը բացուեցաւ հոկտեմբեր 8-ին , կէսօրէ յետոյ ժամը 2:30-ին : Ներկայ էին 48 երեսփոխաններ :

Զնախատեսուած հարցերու զասաւորման յանձնախումբը օրակարգի վրայ դրած էր հետեւեալ հարցերը .

1. Եկեղեցականներու պատրաստութեան հարցը , զորներկայացուցած էր Դիտրոյիսի հոգաբարձութիւնը .

2. Նոր սերունդը Հայաստաննեաց Եկեղեցւոյն աւելի ուերտ կերպով կապելու եւ օտարացումէ վրկելու ինդիրը .

3. Կրթական Ծրագիր .

4. Կիրակնօրեայ Դպրոցներու Ծրագիր :

Առաջին հարցի մասին անցաւ հետեւեալ բանաձեւը .

«Տէղական համալսարանի մը մէջ զետեղել երկու

Հայ ուսանողներ, որոնք արդէն ստացած են առհմային կրթութիւն, եւ այս նպատակին յատկացնել տարեկան 1200.00 (Հազար երկու հարիւր) տոլար:»

Երկրորդ հարցը տեղի տուաւ երկար վիճարանութիւններու: Արտայայտուեցան բազմաթիւ երեսփոխաններ եւ անոնցմէ շատեր մատնանշեցին մարդորսական հետապլնդումները, որոնք տեղի կ'ունենան գուրսէն՝ հեռացնելու Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակները իրենց մայրենի եկեղեցին: Երեսփոխանական ժողովը նկատելով որ շարիքին միակ արմատական զարմանն է Եկեղեցին զօրացումը, որոշեց Կեդր. Վարչութեան միջոցաւ յանձնարարել հովիւներուն եւ հոգաբարձութիւններուն:»

1. Զանալ համախմբելու Հայութիւնը իր Եկեղեցին շնորջ:

2. Կազմել ամենուրեք «Եղբայրակցութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» եւ «Դստերք Հայաստանեայց Եկեղեցւոյ» միութեանց մասնաճիւղեր, քանի որ այս երկու կազմակերպութիւնները իրենց նպատակ ընտրած են ծառայել Հայաստանեայց Եկեղեցւոյ, չանագիր ըլլալ անոնց զաւանութեանց ծաւալումին եւ անոր շուրջ հաւաքել Հայերը, մանաւանդ նորահաս երկսեռ Հայութիւնը:

Կրթական ծրագրի պատրաստութեան հոգը թողուեցաւ Կեդր. Վարչութեան, որ մասնագէտներու հետ խորհրդակցարար պիտի մշակէ ծրագրի մը երեք ամիսէն եւ պիտի զրիէ զայն հոգաբարձութիւններուն ու դպրոցական մարմիններուն ի գործադրութիւն:

Կիրակօրեայ զարոցներու յատուկ ծրագրի մը մշակման գործն ալ յանձնուեցաւ Կեդրոնական Վարչութեան:

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Տ. Եղիշէ Քահանայ Գալչընճեան առաջարկեց համագումարի մը Հրաւիրել բոլոր հոգեւորականները, որոնք կը գտնուին Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան սահմաններուն մէջ, խորհրդակցելու յոյժ կարեւոր ինդիրներու վրայ:

Ժողովը նկատելով որ Եկեղեցականները ազատ են ի պահանջել հարկին կրօնական խնդիրներու Համար՝ կրնան համագումար հրաւիրել, նոր որոշում մը եւս կայացնելու պէտք չտեսան:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
30-րդ ՅՈՒՆԻՍԻ

Քանի մը Երեսփոխաններ առաջարկեցին վոփոխութիւն մը կատարել նոր գծուած սահմանադրութեան հետեւեալ (30-րդ) յօդուածին վրայ:

«Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Երեսփոխանական ժողովէն, ներկայ Երեսփոխաններու պարզ մեծամասնութեան քուէով եւ կը բաղկանայ եօթն անդամներէ, որոնց Երկուքը պէտք է ըլլան Եկեղեցական:» Բայց ներկայացուած առաջարկին, որ ստացաւ հինգի դէմ քսաննեմէկ քուէ, այդ յօդուածը կը բարեփոխուի հետեւեալ կերպով:»

«Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Երեսփոխանական ժողովէն, ներկայ Երեսփոխաններու պարզ մեծամասնութեան քուէով եւ կը բաղկանայ տասն անդամներէ, որոնց հինգը պիտի ըլլան Եկեղեցական:»

Բնդունելով այս վոփոխութիւնը, Երեսփոխանական ժողովը յանձնարարեց Կեդր. Վարչութեան հաղորդէլ զայն անմիջապէս Վեհափառ Կաթողիկոսին եւ խնդրել Նորին Ս. Օծութենէն նկատի ունենալ ժողովին այս բաղձանքը եւ ըստ այնմ վաւերացնել նոր սահմանադրութիւնը:

ԳՐԱՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒԻՆ

Պարոն Նալպարէթ Կիւմիչկերտան, որ վերջերս գտնուած էր Էջմիածին եւ իբր ունկնդիր կը հետեւէր ժողովի աշխատութեանց, ընդ առաջ Երթալով մի քանի Երեսփոխաններու բաղձանքին եւ ատենապետին հրաւէրին, կարգ մը քաջալերական տեղեկութիւններ հաղորդեց Էջմիածնի Մայր Աթոռուի ներկայ կացութեան ու պայմաններուն մասին. յայտնեց որ Նորին Վեհափառութիւնը իր օրհնութիւնները կը դրէ ժողովրդին եւ շեշտեց ելեւմտական տագնապը, որուն մատնուած է Մայր Աթոռը:

Կեդրոնական Վարչութեան կողմէ ծանուցուեցաւ թէ Կեդր. Վարչութեան որոշումով Տ. Տիրայր Ս. Արքեպիսկոպոս ձեռնարկած էր Հանգանակութեան մը ի նպաստ Մայր Աթոռին եւ ցարդ Էջմիածին զրկուած էր արդէն աւելի քան հազար տոլարի գումար մը Հանգանակութեան արդիւնքին եւ ի մօտոյ պիտի կատարուէին դրամական նոր առաջումներ:

Թելագրուեցաւ երեսփոխաններուն իրենց թեմերուն մէջ ոյժ  
տալ հանդանակութեան այս շարժումին եւ զիւրացնել կեղ-  
րոնական վարչութեան ու Առաջնորդարանի գործը յօդուա-  
Մայր Աթոռին:

### ԹԵՄԱԿԱՆ ՏՈՒՐՖԵՐ

Թեմական տուրքերու քանակին վերաբերմամբ Երես-  
փոխանական Ժողովը անփոխի պահեց 1927-ի նիստին ո-  
րոշումը:

Այս առթիւ Տրոյի Երեսփոխաններէն, Պարոն-Յակոբ  
Աղաղարմ, Երեսփոխանական Ժողովի ուշադրութիւնը հրա-  
ւիրեց այս թեմերուն վրայ, որոնք չեն կատարած իրենց  
պարտականութիւնը հանդէպ Առաջնորդարանի:

Կեդր. Վարչութեան տեղեկաբերը, Պարոն Խոսրով Պա-  
պայեան յայտարարեց թէ, ինչպէս յիշուած է տեղեկապրին  
մէջ, Բոստոնի Հոգարարձութիւնը խզած էր իր յարաբերու-  
թիւնը Առաջնորդարանի հետ եւ մերժած որեւէ վճարուա-  
լնել ի հաշիւ թեմական տուրքերու եւ մկրտութեանց ու  
պահերու: Նմանապէս Բոստոնի Հովիւր, Տ. Շահէ Ծ.  
Վարդապետ, մերժած էր Առաջնորդին հաղորդել Բոստոնի  
Հոգարարձութեան անուանացանկը, ինչպէս կը տրամադրէր  
Սահմանադրութիւնը: Պարոն Պապայեան առաջարկեց Ժո-  
ղովին որոշում մը տալ այս մասին եւ որդեգրել սկզբունք  
մը, որով կանոնաւորուէին Հոգարարձութեանց եւ Հովիւ-  
ներու յարաբերութիւնները կեդրոնին հետ:

Նիու Եորկի Երեսփոխան Դոկտ. Ս. Արգարեան թելա-  
գրեց բացատրութիւն պահանջել Բոստոնի Երեսփոխաննե-  
րէն: Անոնցմէ մին, Պարոն Ս. Կիւրեղեան, յայտարարեց թէ  
Բոստոնի թեմին անջաման պատճառը վերցած ըլլալով,  
Բոստոնի Հոգարարձութիւնը յետ այսու պիտի կատարէ իր  
բոլոր պարտքերը:

Դոկտոր Ս. Արգարեանի եւ Պարոն Վահան Քիւրեցնեանի  
առաջարկով յանձնարարուեցաւ կեդր. Վարչութեան յետ-  
այսու վճռական միջոցներ գործադրել նման պարագաներու  
մէջ:

ՀԱՎԻԻՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԺԱՄ  
Կեդրոնական Վարչութեան անունով, Պարոն Խոսրով

Պատպայեան առաջարկեց Ժողովին հեղինակութիւն տալ Կեդ-  
րոնական Վարչութեան որդեգրելու կանոն մը, որով ճռ-  
զուին հովիւներու պաշտօնավարութեան ժամանակաշրջանը  
եւ ընտրութեան եղանակը: Որոշուեցաւ ինդիրը յանձնել  
կեդրոնական Վարչութեան:

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԵՐ

Աւոտքրի Հոգարարձութիւնը կը խնդրէր որոշել թէ ո՞ր  
տօները աղգային են եւ որոնք Եկեղեցական: Ժողովը որո-  
շեց յանձնարարել կեդր. Վարչութեան ուսումնասիրելու  
ինդիրը եւ իր հետազոտութեան արդիւնքը հաղորդելու հո-  
վիւներուն ու Հոգարարձութիւններուն:

### Ա.Ա.ՁՆՈՐԴԱՐԱՆԻ ՔԻՒԴԱՅՆ

Բիւղջի Յանձնախումբը յառաջիկայ տարեշրջանին  
համար առհմանած էր հետեւեալ բիւղջին, զոր Ժողովը ըն-  
դունեց միաձայնութեամբ:

### ՄՈՒՏՏՐ


Թեմական տուրֆերէ	5000
Պոակներու եւ մկրտութեանց հասոյթներէն	2500
Հանգանակութիւն	10000

Գումար ..... \$17500

### ԵԼՔ

Առաջն. Տեղապահի տարեթոշակ	1000
Փարտուղարի տարեթոշակ	1750
Դիւտան. ծալսթեր եւ հեռածայն	750
Գրասենեակի վարձ	780
Ճանապարհածախս	400
Տպագրական ծալսթեր	320
Վճարում ի. հաշիւ պարտուց	7500
Կրօնաքերը եւ գրեյլիներ	1500
Այցելու հովիւ (քոչակ եւ նանապարհածախս)	2000
Հանգանակութեան ծալսթ	1500

Գումար ..... \$17500



Առաջնորդական Տեղապահի տարեթոշակը թէեւ Ելից  
բաժնին մէջ գրուած է Հաղար տոլար՝ կընայ բարձրանալ  
Հաղար հինգ հարիւր տոլարի, ըստ Բիւղչէի Յանձնախումբի  
թէլաղութեան, դոր միաձայնութեամբ Ընդունեց Երեսի.  
Ժողովը:

### ՓԱԿՈՒՄՆ ԺՈՂՈՎԻ

Երեսփոխանական ժողովը սպառած էր իր օրակարգին  
հարցերը: Ատենապետ Պարոն Մարկոս Տէր-Եմուէլսան  
հրաւիրեց Արժանապատիւ Տ. Սերովիք Քահանայ Ներշա-  
պուհը իրը նախազահ, կատարել փակման արարողութիւնը:

Արժանապատիւ նախազահը օրհնեց ժողովին աշխա-  
տանքները, ողջերթ մազթեց Երեսփոխաններուն եւ ազօթքով  
մը ու յորդորական ուղերձով մը փակուած յայտարարեց  
Երեսփոխանական ժողովը:

### ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս. ԱՌԱՋՆՈՐԴ ՀՕՐ

1927 Մայիս 16 — 30 Մեպսեմբեր, 1928

Ս. Առաջնորդ Հայրը, նախընթաց տարիներու նման, իր  
աեղեկագիրը գրած է ընդարձակ, 140 էջ, իբր նախարան  
նշանակելով (Բ. Տիմ. Դ. 7-8) «Զբարուք պատերազմ պա-  
տերազմեցայ, զլնթացսն կատարեցի, դհաւատան պահեցի:  
Այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պահկն, զոր  
հատուցէ ինձ Տէր: Ոչ միայն ինձ, այլեւ ամենեցուն որ  
սիրեցին զՅայտնութիւն նորա:»

Տեղեկագրի նիրթերն են .—

Ա. — Նախարան .

Բ. — Առաջնորդարանի տեղափոխութիւն ի Նիւ Եորք .

Գ. — Առաջնորդական այցելութիւններ .—

1. Պորտանի, 2. Ռուբերտանի, 3. Ռւստր, 4. Թրոյ,  
5. Նիւ Եօրք, 6. Թրոյ, 7. Նիւ Եօրք, 8. Հարթֆըրդ,  
9. Նիւ Բիթուրն, 10. Խելին Սիտի, 11. Թրոյ, 12.  
Բրուլին, 13. Բինգհամուրն, 14. Խելին Սիտի, 15.  
Աստորիա, 16. Թրոյ, 17. Ֆիլատէլիա, 18. Շիքա-  
լոն, 19. Ռևսոն Փուլման, 20. Ռէյսին, 21. Սաուր  
Միլուուֆի, 22. Շիքալոն, 23. Ֆիլատէլիա, 24. Պրո-  
վիտէնս, 25. Խելին Սիտի:

բ) Զայցելած վայրեր :

զ) Առաջնորդի անձնական մասնակցութիւն պաշտօնի :

Դ. — Եկեղեցիների ներքին կեանք .

1. Բոստոն, 2. Նիւ Եօրք 30-րդ փ. 3. Նիւ Եօրք Մայր  
Եկեղեցի:

Ե. — Եկեղեցիներ :

1. Նոր օծուած Եկեղեցիներ, 2. Նոր Եկեղեցիներ, 3.  
Նոր շինուած Եկեղեցիներ, 4. Օծման պատրաստ Եկե-  
ղեցիներ, 5. Սեփական Եկեղեցիներ, 6. Վարձու Եկե-  
ղեցիներ:

Զ. — Հովիւներ :

ա. — Պաշտօնավարող, բ. — Անպաշտօն, զ. — Հովիւների  
տեղափոխութիւն, դ. — Նոր Հովիւներ, ե. — Վախճա-  
նած Հովիւներ, զ. — Նոր Ճեռնադրուած Հովիւներ,

Է - Վարձատրուած Հովիմներ:

Է - Տեղեկագիր Հովիմներ:

Է - Հոգաբարձութիւններ:

Թ - Կարգապահութիւն:

Ժ - Դպրոցներ:

Ա - Միջնակարգ դպրոցներ, Բ - Կիրակօրեայ դըպրոցներ:

ԺԱ - Եկեղեցասէր Հայուժեաց Միութիւններ:

ԺԲ - Երիտասարդների Միութիւն:

ԺԳ - Ուսումնական Խորհուրդ:

ԺԴ - Յարաբերութիւն Մայր Աթոռի Հետ:

ԺԵ - Արտաքին յարաբերութիւն:

ԺԶ - Առաջնորդարանի պահպանութիւն:-

Ա - Առաջնորդարանի վիճակ, Բ - Առաջնորդարանի պարտքեր, Գ - Ազգային տուրք:

ԺԷ - Վարչական կեանք:-

1. Երեխփոխանական ժողով, 2. Կեդր. Վարչութիւն, 3. Տնտեսական ժողով, 4. Քաղաքորնիոյ հարց, 5. Հարաւային Ամերիկա, 6. Առաջնորդ. դիւան, 7. Բերքերեան վարժարան, 8. Նիր Խոր Ռուիփի օգնութիւն, 9. Դրսի Եկեղեցիներ (1. Սիրիա, 2. Ռումանիա):

ԺԸ - Մէր ուղին:

ԺԹ - Մէր հրաժարականը:

Ի - Հուսկ բանք:

Քաղուածարար կը ներկայացնենք հետեւեալները:-

ԲԻՆԿԵՄԹԸՆ, Ն. Ե., Յունուար 27-30, 1928 - «Հոգաբարձութեան Հրաւէրով, որի կազմի մէջ էր նաև Պր. Հայածեանը, Առաջնորդը Յունուար 27-ին Պինկէմթըն էր: Երեկոյեան մասնաւոր ժողով Հոգաբարձութեան անդամների, կողմնակի անձերի և Եկեղեցասէր Հայուժեաց Միութեան անդամուհիների հետ Առաջնորդի մօտ: - Պարզուեց որ 1) Տիկն. Միութիւնը պատրաստ է տալ §250, 2) Հոգաբարձութիւնը՝ §350, 3) Մասնաւոր խոստումներ եղած են §515, ընդամէնը՝ §1,115, այն ինչ որ պէտք էր Եկեղեցւոյ §1500 կանխավճարի և §3-400 եւս անակնիալների համար: Ժողովի ներկաներուն առաջնորդը խօսեց, բացատրեց Եկեղեցու կարեւորութիւնը և հանգանակութեան ձեռնարկուեց:

Նախկին խոստումների վերայ աւելցան նոր խոստումներ եւս նոյն երեկոյեան և Հոգաբարձութեան գումարների հետ հանգանակութեան գումարը բարձրացաւ §1905-ի:

Որոշուեցաւ հետեւեալ օրը, Շաբաթ, ժողով գումարել կանանց համար միայն, զի այրեն զբաղուած պիտի լինէին, Եկեղեցու մէջ, Առաջնորդը խօսի նոցա և հանգանակութիւնը շարունակուեւ: Ժողովը գումարուեց. սակայն սաստիկ ձիւնի եւ զուրսը տիրող պաղի պատճառով եկած էին 9 կին: Ժողովը տեղի չունեցաւ:

Կիրակի, Յունուար 29-ին, Ժողովիուրդը՝ Հրաւէրուեց Եկեղեցին, ժամը 2-40-ին, լսելու Առաջնորդի քարոզը: Եկեղեցին, մօտ 4-500 հստարանով, լի էր: Առաջնորդը խօսեց, բացարելով մեծերու պարտականութեան մասին զէպի աճող սերտնովի գաստիարակութեան զործը, շեշտեց Եկեղեցու գերը հայ ժողովրդի ցեղային պահպանութեան զործի մէջ, հրաւէրեց սիրով միարանիւ և գնել այդ Եկեղեցին, որ պատեհութիւն էր խր բոլոր յարմարութիւններով, զուրս եղած ընդարձակ հողամասով, ուր կարելի էր երկու կամ եռայարկ բնակարան չինել, իր Եկեղեցու հասութարեր կալուածք, յետոյ եւս ունենալով բաւականաշագիտեղ փոքրներու զպրոցական խաղերու և մեծերու ժամանցի համար, բացի արգէն պատրաստ եկեղեցուց եւ յարակից մասերից:

Հանգանակութեան զործը պահպանծից աւելի արդիւնաւոր եղաւ, նախորդ փոքր գումարների խոստումները աւելացան և ընդհանուրի մասնակցութեամբ (սակաւաթիւ բացառութիւններով) հանգանակութեան զումարը ելաւ §3120-ի: Խոստումների գումարները ապահովելու համար Առաջնորդի առաջարկութեամբ իւրաքանչիւրն իւր խոստացած զումարի քանակութեամբ պարտադիր (bond) ստորագրեց (բացի Մնկրեանէ) և ամբողջը յանձնուեց Հոգաբարձութեան՝ որեւէ դրամատան միջոցով հետզհետէ այս զումարները զանձելու պարմանով:

Բինկէմթընի փոքր գաղութը ցուցուց, որ այս օրն ինքը մէծ զարձաւ, որովհետեւ զնման գումարի կէսն արգէն պահպանծից էր, մինչ այն անտարբերներն եւս տեսան կատարուելիքն ու հաւատաւորներ եղան և զիտցան, որ եթէ կա-

մէնան միշտ էլ ստեղծել կարող են իրենց գոյութեան պահպանութեան խարիսխը:

Հետեւեալ օրն Առաջնորդը թողեց Բինդհամալինը նոյն երեկոյեան կենու. Վարչութեան հրաւէրով տեղի ունենաւ-լիք ժողովին մասնակցելու, ուր հրաւիրուած էին Ն. Եորքի շրջանի երեսիոխանները, հոգաբարձութիւնները, հովիւները Առաջնորդարանի դրութեան նկատմամբ խորհրդակցութեան:

Նախորդ երեկոյեան Առաջնորդը այցելելով գնուելիք եկեղեցու հովիւնին, յայտնեց ժողովի հետեւանքի մասին եւ խնդրեց նորա աջակցութիւնը եկեղեցին ի մօտոյ յանձնելու մասին: Հովիւը յայտնեց, որ եթէ զննման Յանձնաժողովը կարող լինի \$1000-ի փոխարէն մտցնել \$1500, ինքը պատրաստ պիտի լինի խնդրել իւր հոգաբարձութիւնից զիջանի \$6500-ից 2 կամ 300 տոլար եւս ի նպաստ հայերի: Ապագային \$1500 գումարը մուծուեց շինութեան եւ զնման Յանձնաժողովի կողմից եւ եկեղեցին ի պաշտօնէ ճանաչուեց հայ զաղութիւնի սեփականութիւն, պայմանով որ զեւ եւս հին եկեղեցու մէջ պիտի շարունակուին իրենց պաշտամունքները, մինչեւ նորի պատրաստ լինելը, որ հաւանօրէն յաջորդ Յունիուարից առաջ աւարտած կը լինի:

ՖիլԱՏԵԼՖԻԱ, Մարտ 28 — Ապրիլ 2. — Վազօրօք կարգադրութեան համաձայն Առաջնորդը թրոյի եկեղեցին օծելէ յետոյ՝ անցաւ Ֆիլատելֆիա, տեղույն նոր գնուած եւ արդէն Օծման պատրաստ եկեղեցին եւս օծելու:

Ֆիլատելֆիայի նախորդ «Ա. Սահակ-Մեսրոպ» Եկեղեցու վաճառումով համայնքն, ի պաշտօնէ, երկուքի բաժանուեց եւ իւրաքանչիւրն իւր շրջանի (Արեւմուտքի եւ Հիւսիսի) մէջ աշխատեց նոր Եկեղեցի ունենալու հոգածութեամբ տարուիլ: Վէսթ Ֆիլատելֆիան իւր ապագայ Եկեղեցու տեղը գնելէն ոչ շատ յետոյ, Նօրթ Ֆիլատելֆիան եւս յաջորդեցաւ իւր հոգաբարձութեան եւ քննութեան Յանձնաժողովի համերաշխ գործակցութեամբ գտնել շատ յարմարաւոր եւ պատշաճ Եկեղեցի մը, 16-րդ եւ Օքսիօրտ փողոցների անկիւնի վերայ եւ նախնական բանակցութիւնները վարելէ յետոյ կարող եղաւ սկզբնական զինը (\$75,000) իջեցնել \$55,000-ի եւ զնել՝ այն նախնական \$5000-ը վճարելով 1927,

Յուլիս 5-ին. Հետեւեալ \$5000-ը՝ պիտի վճարուէր Հոկտեմբեր 5-ին, եւ երրորդ \$5000-ն եւս 1928-ի Յուլիս 5-ին, եւ մնացածն եւս 13 տարուայ ընթացքին: Այս \$15,000 այդ դումարն էր, որ Նօրթ Ֆիլատելֆիան ստացած էր նախորդ Եկեղեցին վաճառելու զնից կէսի վճարումով (\$15,500):

Եկեղեցին ի պաշտօնէ զնելուց յետոյ հոգաբարձութիւնն ու Շինութեան Յանձնախումբը ձեռնարկեցին Եկեղեցու ներքին մասի փոփոխութեան՝ ապագայ հայ Եկեղեցու վերածելու նպատակաւ: Այս գործը յառաջ տանելու համար կարեւոր էր համայնքի մէջ հանգանակութիւն կատարել: Գործը կատարուեց ներքին ոյժերով եւ Հովուի եռանդուն աջակցութեամբ: Փողովովից կարող եղան հանգանակել \$4860, որով հնարաւոր եղաւ ներքին փոփոխութիւնների գործն սկսիլ 1928-ի Ծննդեան Տօներից յետոյ:

Իսկ մինչ այդ Եկեղեցին ծառայում էր Եկեղեցական բոլոր պաշտամունքների համար:

Որչափ աշխատեց Առաջնորդը հայկական ճարտարապետութեան որեւէ բուն-արուեստի ոճ մտցնել տալ Եկեղեցու մէջ, սակայն հնարաւոր չեղաւ: Առաջ Սեղանը կանգնեցին տեղական հայ վարպետներ, իրենց տեսածի ու ճաշակի համաձայն:

Առաջնորդի քանի մի օրով կանուխ դան իւր արժէքն ունեցաւ չնորհիւ այն վերջական ցուցումների, որոնք վերաբերում էին վերջին պատրաստութիւնները լրացնելուն: Մարտ 29, 30 եւ 31 կլանուած էին այս հոգսերով:

Մարտ 31, Շարաթ օրը կատարուեց Եկեղեցու Օծման հաւակատիքը: Առաջնորդը խօսեց քարոզ «Եւ ես երթամ ձուկ որսալ» բնաբանով, ցոյց տալով, թէ հանրական կեանքի կարիքները լրացնելու համար որքան կարեւոր է անհատական լմբունումների համերաշխութեան ոգու վերածելու ջանքերը, որի արդիւնքն է Ֆիլատելֆիայի այդ մեծ ու պատուաբեր Եկեղեցին, ընդարձակ ըստ ամենայնի իւր մէջ առնելու հայութիւնը՝ վերը եւ հայութեան երիտասարդութիւնը՝ վարը, իբրեւ դպրոց, լսարան, վարժուոց՝ հոգիներու եւ սրտերու:

Ապրիլ 1-ին կատարուեց Եկեղեցու Օծումը՝ մեծ շըով ու հանդիսաւորութեամբ, Նօրթ եւ Վէսթ Ֆիլատելֆիայի

ժողովրդի խուռն բազմութեան, օտար հիւրերի, Եպիսկոպոսական Եկեղեցու և այլ յարանուանական Եկեղեցու հրատիրեալ Եկեղեցականների ներկայութեամբ: Օծման կարգը Առաջընելուց յետոյ Ֆիլատելֆիայի թեմի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ Rt. Rev. Bishop Thomas Garland (որ չէր կարողացել աւելի կանուխ գալ, իւր Եկեղեցու պաշտամունքին մասնակցելու պարտաւորութեամբ և ճիշտ այս պահուն հասնելով) հրաւիրուեցաւ Առաջնորդի կողմից նոր Օծուած «Ս. Գր. Լուսաւորիչ» Եկեղեցու Անդամնից խօսելու:

Bishop Garland-ը մեծ հմտութեամբ պարզեցով Հայ Եկեղեցու անցեալը, նորա գերը իրը քրիստոնեայ ոյժ, Հայ ժողովրդի վերայ, յորդոր կարգաց ներկայ Հայութեան անշնորդի վերայ, յորդոր կարգաց ներկայ Հայութեան անշնորդի վերայ, յորդոր կարգաց ներկայ Հայութեան անշնորդի վերայ, յորդոր կարգաց ներկայ Հայութեան, որովհետեւ «արժէ չնալ զնալ նորա հետեւից, փարիլ նորան, որովհետեւ «արժէ այդ Եկեղեցին սիրել եւ նորա զաւակ լինելու պատիւն ունեալ», պահպանել նորան անազարտ, եւ օտար հիւրերին եւս յեկեցուց սիրել ու յարգել գարաւոր նահատակութիւնների բովից պատուով ելած մի ժողովուրդ, որ տակաւին իւր Եկեղեցին սիրելու մեծ արժանիքն ունի:

Bishop Garland-ը ներողութիւն խնդրելով, որ իւր պարտեաց պարտաւորութիւններն իրեն չեն արտօնում աւելի երկար մնալ, հեռացաւ իւր հետեւորդներով:

Պատարագը շարունակուեց Օծման արարողութեան մասնակցող Հայրերի (Տ. Մատթէոս Քհն. Հէքիմեան, Տ. Նշան Քհն. Փափագեան, Տ. Ալբէն Քհն. Թորոսեան) մասնակցութեամբ: Առաջնորդը խօսեց իւր քարտով Հայութեան զաւակներին յեշեցնելով օտար Եկեղեցականի մը այնթեան զաւակների յեշեցնելով օտար Եկեղեցու նկատմամբ, յորդորեցան սրտայոյզ չեշար Հայ Եկեղեցու նկատմամբ, յորդորելով աւելի եւս կապուիլ իրենց Մօր Հետ, պատսպարուիլ անոր հօգանու ներքոյ, իւր ինքնուրոյնութիւնը եւ աղդային կեանքը պահպանելով:

Ս. Պատարագից յետոյ, տեղի ունեցաւ Աւազանի Օծումը, ապա երեք փաքքերի Մկրտութեան հանդէսը եւ հուսկուրեմն 6.30-ին վերջացաւ հանդէսը:

Ֆիլատելֆիայի այս նոր զնած Եկեղեցին, թէ արտաքինով եւ թէ իւր ներքինով Ամերիկայի հայ Եկեղեցիների մէջ լաւագոյներից մէկն է: Վերն ընդարձակ տարածութիւն չուրջ 1000 հոգու, վարն ընդարձակ սրահ ու սենեակներ,

դպրոցի, կիրակնօրեայ վարժոցի, հագարարձութեան զրառեակի, ամերիկան կրթական ժամանցների եւ երիտասարդութեան համար:

Մասնաւոր նուիրատուներ, մէկը միւսը գերազանցելու մրցակցութեամբ, բերած էին իրենց նուէրները, որոնց մէջ աչքի էր ընկնում Պր. Ա. Ճէրահանեանի նուիրած խոարական Վերածնութեան ոճով կիրտուած երկու հսկայական աշտամակներ եւ նոցա մէջ կամքջող մոմաշարով, որ զնամատելի մի ընծայ էր, ոչ միայն իւր արժէքի տեսակէտով, այլ եւ իրբեւ արուեստի գործ: Ֆիլատելֆիոյ հին Եկեղեցամէր գէմքերից, Պր. Ֆրանք Նահիկեան, իւր \$1000 տոլար նուիրաբերումով, արժանացաւ Եկեղեցու կնքահայր լինելու պատուին:


Եկեղեցու Տիկնանց Ընկերակցութիւնը հոգ էր ունեցած ճաշի սեղան ունենալու վարը, սրահին մէջ, որի շուրջ բոլորած Առաջնորդն ու Եկեղեցականները, հոգաբարձութիւնն ու Շինութեան Յանձնաժողովի անդամները, գաղութի երկու հասարակութիւնը, լիովին զգացին, թէ լաւագոյն օրն է, որ կ'ապրին այդ երեկոյ, որովհետեւ ամենքն ալ լաւագոյն պարտականութեանց կատարման զգացումն ունիին:

Եւ այսպէս Հիւս Ֆիլատելֆիան ամփոփուեց ինքն իւր մէջ եւ իւր Եկեղեցու շուրջը:

Արեւմտեան Ֆիլատելֆիան գեռ եւս իւր անելիքի նախապարատական ըրջանը կը բոլորէ:

Գնուած տեղի (6006 Walnut St.) վերայ նոր Եկեղեցի կառուցանելու հարցը գեռ եւս կը դարձնուի: Շինութեան Յանձնախումբն անցեալ ձմեռ յաջողած է շրջիւ իւր ըրջանի հայութեան մէջ եւ նոր կառուցանելիք Եկեղեցու համանութիւնառաջարկութեան խոստումներ ստանալ: Ալդ խոստումները գեռ եւս չեն հասած այն կէտնապատճի գումարին, որ Յանձնաժողովն ունի աչքի առաջ, հետեւարար գործի ձեռնարկելէ կը զգուշանայ, որպէսպէս Եկեղեցու շինութեան զործը պատահականութեան խաղալիք չդառնայ: Մահաւանդ այս տարի, երբ Ֆիլատելֆիոյ հայ զործաւոր եւ աշխատող գասակարգը տագնաստի օրեր է անցնում զործի ստիւթեան պատճառով:

Մակային Շինութեան Յանձնաժողովը իւր նախապար-



Եկեղեցու սրահին մէջ, ուր երկսեռ մէծ բազմութեան առաջ  
խօսեց, յիշեցրեց մայրերուն իրենց դերը ազգային կեանքի  
պահպանութեան համար, որի վերջարանի պահուն ներկայ  
երիտասարդ սերունդն ու աշակերտութիւնը ինքնարերա-  
րար ոտքի ելան եւ ձեռք բարձրացնելով «խոստացան» սո-  
վորել հայ գիրն ու լեզուն եւ պահպանել Հայութիւնը:

Ս. ՄիլՈՒՕՔԻ. Ապրիլ 27-29, 1928 - Հովիւը, Տ. Խո-  
րէն Վարդապէտ Լազարեան, պաշտօնի անցնելէ յետոյ հոգ-  
է ունեցած մանրամասն վիճակագրութիւն կազմել իւր Հով-  
ութեան, սկսած իւր պաշտօնի օրից, որով առ 1 Ապրիլի 928  
անինք -

So. Milwaukee - Ընտանիք 77, այր 93, կին 77, աղջիկ 186,  
տղայ 141, ամուրի 21, այրի 2:

West Alis - Ընտանիք 23, այր 25, կին 23, աղջիկ 58,  
տղայ 51, ամուրի 29:

Milwaukee - Ընտանիք 16, այր 17, կին 17, աղջիկ 6,  
տղայ 5, ամուրի 3:

Հովուութեան ըրջան՝ Ընտանիք 116, այր 135, կին 117, աղ-  
ջիկ 250, տղայ 197, ամուրի 53 եւ այրի 2:

Առաջնորդը Ապրիլ 29-ին, կիրակի օրը, Ս. Պատարագ  
մատուցանելով, քարոզեց ժողովրդին «Նահատակաց Տօնի»  
առթիւ, վերյուշելով հայ ժողովրդի մէծ զաւակների քա-  
ջութիւնը՝ յանուն զաղափարի մահուան դիմելով, զաղա-  
փարի պաշտօնութիւնը մէծութիւնը ցոյց տալով ժողովուրդ-  
ների եւ աղջիկի կեանքի մէջ, յորպորելով հետեւիլ իւր  
Զաւակների գիտակցարար զնացած շաւզին եւ պատուասել  
այն նոր սերնդի սրախ մէջ:

ՆՈՐ ՕՇՈՒԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆԵԲԻ -

ա) ԹՐՈՅ, Ն. Ե. - Թրոյի նոր ձեռք բերուած Եկեղեցին  
հայու մէծ հաւատաքի, դէպի լաւագոյնը ձգտելու, զժուա-  
րութիւնները յազմահարելու կարողութեան մի գեղեցիկ  
ապացոյցն է: Ներքին, արհեստական կերպով յարուցած  
արգելքները ոչ միայն չկասեցրին գործը, այլ նոր թափ  
տուին գործի յաջողութեան: Հայութիւնն իւր ներքին մա-  
քառումներէն ելաւ ոչ միայն յաղթական, այլև պատուով  
եւ բարոյական խոշոր վարքագծով յաչս օտարներու:

Եկեղեցին Օծուեց 1928 Մարտ 25-ին, վերակոչուելով  
«Ս. Պետրոս»:

բ) Նոյն պայմանների մէջ համարեա սկիզբն առաւ Ն.  
Ֆիլատելիքիայի Եկեղեցին, որի հաղարձութիւնը, Շինու-  
թեան Յանձնախումբը, ժողովուրդոն ու Հովիւը զիտցան  
պատուով ելնել իրենց առաջ եղած այնքան ծանր վիճակէն  
եւ տեղական հայութեան տալ այս գեղեցիկ Եկեղեցին, որ  
08ուեց 1928 թ. Ապրիլ 1-ին, անուանուելով «Ս. Գրիգոր  
Լուսաւորիչ»:

ՆՈՐ ՇԽՈՒԱՆԵԼԻՔ ԵԿԵՂԵՑԻՆԵԲԻ -

ա) Ֆիլատելիքիա, Վէսթի շրջանի համար. բ) Դիտրոյտ,  
Հայլէնտ Փարքի շրջանի համար. գ) Դիտրոյտ, Դէյլըրիի  
շրջանի համար. դ) Նիու Ենորք, Ավթառունի մէջ. ե) Բրուք-  
լին. զ) Լորէնս. է) Ուալթընսվիլ. ը) Ուոթըրթառուն. թ) Ապրինքիլդիլ. ժա) Նուարք:

ՍԵՓԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵԲԻ -

ա) ՀԻՄՍՔ - «Ս. Փրկիչ», գնուած \$15,000, այժմ տւելի  
բան \$25,000. հիմնուած 1890 թուին:

բ) ԻԻՆԻԼԻՆ ՍԻՏԻ (նախկին Վերը Հոբոքը) - «Ս. Կառագ»,  
գնուած \$10,000-ով, այժմ տւելի քան \$35,000 ար-  
ժողութեամբ: Չունի պարտք: Ունի փոքր կալուածք, Ասո-  
րական նախկին Եկեղեցին, գնուած \$3,000-ով: Հիմնուած  
1905-ին:


շ) ԹՐՈՅ - «Ս. Պետրոս» Եկեղեցի. (Green Island)  
գնուած \$7,500-ով. ծախքեր եղած են վրան շուրջ \$3,000:  
Պարտք չունի: Այժմ արժէ \$6-7,000: Հիմնուած 1910 թուին:

դ) ՖԱՌԻԼԻՐ - «Ս. Գր. Լուսաւորիչ»: հիմնուած 1910  
թ. Ցունիսին. գնուած \$3,000-ով. փայտաշէն: Հովուատան  
ՀԼՄ (\$2,600) արժէ շուրջ \$12,000:

ե) ԵԴԻՄ - «Ս. Աստուածածին». հիմնուած 1912-ին.  
շինուած \$3,000-ով. փայտաշէն: Չունի կալուածք եւ ոչ էլ  
պարտք: Այժմ արժէ շուրջ \$5,000:

զ) ՖՐԵԶՆՈ - «Ս. Երրորդութիւն»: հիմնուած 1914-ին.  
շինուած \$25,000-ով, այժմ արժէ աւելի քան \$75,000, իւր  
փոքր Հովուատան հետ: Չունի պարտք:

է) ՊՐՈՎԻՆՑՆԵՑ - «Ս. Թարգմանչաց»: գնուած է



Եաների նկատմամբ Ամերիկեան Եպիսկոպոսական Եկեղեց-  
յու վարչութիւնը եղած է աւելի քան բարեացակամ և քրիս-  
տոնէական եղայրակցութեան հոգուով կապուած։ Այն բո-  
լոր վայրերի մէջ ուր չունինք սևիական ազդային Եկեղեց-  
յու չէնք, այդպիսի վայրերի մէջ Եպիսկոպոսական Եկե-  
ղեցիները միշտ էլ սիրով տրամադրուած են եղած, երբեմն  
չոտ չափաւոր վարձով, երբեմն եւս ձրի։

Այդպիսի վայրերն են—

- 1.— Նիու Եորք, Adam's Memorial Church-ի վերին  
սրահը, ամսական \$100.00-ով։
- 2.— Ֆիլատելիիա, W-ի Համար, St. George's Եկեղեցին  
ամէն Կիրակի, ամիսը \$30.00-ով։

3.— Դիմույտ, St. John's Եկեղեցու մտարան մէջ, Հա-  
մարեա ձրի, իսկ մէծ Տօներին, նոյնիսկ Մ. Եկեղեցին և  
այս բոլորը պարտական ենք Եկեղեցու Հովուի, Rev. War-  
doff-ին։

- 4.— Դիմույտ, Դէյըրի մասը, չնչին վարձքով։
- 5.— Քլիւլանտ, 6. Լորենս, 7. Փորդլանտ, 8. Հարտ-  
ֆլրտ, 9. Սպրինգֆլրտ, 10. Սիրաքիւլ, 11. Գրանդ-Ռա-  
պիդ, 12. Գրանդ Սիթի, 13. Ռոքվոլըն, 14. Սէնթ-Լուիզ,  
15. Ռիչմոնդ, 16. Նուարք, 17. Բինդհամտըն։

ՀՈՎԻՒՆԵՐ—

### ՊԱՇՏՈՆԱՎԱՐ ՀՈՎԻՒՆԵՐ

Ամերիկայի Թեմի մէջ

- 1.— Տեսնդ Վարդապետ Մարգուկէսեան, Պրովինցիա
- 2.— Տորէն Վարդապետ Լազարեան, Ա.-Միլուոքի
- 3.— Շահէ Ծ. Վարդապետ Գասպարեան, Բոստոն
- 4.— Վահրամ Ծ. Վարդապետ Նազարէթեան, Դիմույտ
- 5.— Գարեգին Ա. Քահանայ Յովակիմեան, Ու. Փուլման
- 6.— Վարդան Քահանայ Դաւթեան, Ռէյսին
- 7.— Տարութիւն Ա. Քչնյ. Սարգսեան, Նիու Եորք
- 8.— Սերովէ Ա. Քչնյ. Ներշապուհ, Նիու Եորք
- 9.— Պետրոս Քչնյ. Մամբրէսեան, Դիմույտ
- 10.— Եղիշէ Քչնյ. Գալէխնձեան, Թրօյ
- 11.— Մովսէս Քչնյ. Տէր-Մտեփանեան, Դիմույտ
- 12.— Վահան Քչնյ. Կիւլտալեան, Շիկագո

- 13.— Տ. Մատթէոս Քչնյ. Հէքիմեան, Աստորիա, Լ. Ա. Ա. Ա. Ա. Ա.
- 14.— Տ. Գարբիէլ Քչնյ. Մամուէլեան, Բուէնոս-Այրէս
- 15.— Տ. Պետրոս Քչնյ. Պարամատեան, Ս. Պառլո
- 16.— Տ. Աթիկ Քչնյ. Ծոցիկեան, Ուստր
- 17.— Տ. Դաւիթ Քահանայ Տէր Աւելիսեան, Գրանիտ Սիդի
- 18.— Տ. Նշան Քահանայ Փափագեան, Փիլատելիիս, Ն.
- 19.— ~~Տ. Բանակ Քչնյ. Գալանտան~~, Նիու Բրիտուն Ճանաչուած
- 20.— Տ. Արսէն Քչնյ. Թորոսեան, Յեւուանդիս Քուազային
- 21.— Տ. Յովհաննէս Քչնյ. Ամիրեան, Բուէնոս Այրէս
- 22.— Գուլգին Քչնյ. Թաշճեան, Թորոտովա
- 23.— Տ. Մամբրէ Վարդապետ Գալֆայեան, Խւին Սիտի
- 24.— Տ. Պետրոս Քչնյ. Ցակուրեան, Նիու Եորք։

Քալիփորնիայ մէջ

- 25.— Տ. Վարդան Ծ. Վարդապետ Գասպարեան, Ֆրէզնօ.
- 26.— Տ. Տիրայր Ծ. Վարդապետ Մարգարեան, Ֆաուլիք.
- 27.— Տ. Թէսուրոս Քչնյ. Խահակիեան, Եղեմ
- 28.— Տ. Ատոմ Քչնյ. Մելիքեան, Լոս-Անջելոս
- 29.— Տ. Խաչիկ Քչնյ. Գուուեան, Ս. Ֆրանցիսկօ

### ԱՆՊԱՇՏՈՆ ՀՈՎԻՒՆԵՐ ունինք այժմ—

- 1.— Ազարիա Քահանայ Պոյաճեան, պաշտօնէ քաշուած  
տարիներէ ի վեր, զաւակներու մօտ, ի Նիու Եորք։

2.— Տ. Բարսեղ Քահանայ Թորոսեան, անպաշտօն խրա-  
յիններու մօտ, ի Ֆրէզնօ։

3.— Տ. Պետրոս Քահանայ Վարդանեան, անպաշտօն,  
Խրայիններու մօտ, Խւին Սիտի։

4.— Տ. Մատթէոս Քահանայ Մահիկեան, անպաշտօն,  
տարիներէ ի վեր, ի Նիու Եորք։

5.— Տ. Եղիշար Քահանայ Աշճեան, անպաշտօն, ի  
Բոստոն։

6.— Տ. Ռուբէն Քահանայ Գարիկեան, անպաշտօն, ի  
Նիու Եորք։

### ԴՊՐՈՑԵՆԵՐ—

- Մէր մանուկ սերնդի հայեցի կրթութեան հոգն ամբող-  
ջապէս ընկած է Առաջնորդարանի վերայ։ Եւ բնական է այդ  
եւ իրական ու իրաւական։ Առաջնորդարանն, իրեւ հասա-  
րակաց հիմնարկութիւն, չկոր իւր դրութեամբ, սակայն

Համայնական իւր էութեամբ, պարտք ունի այդ ծանր հոգերով տարուելու: Եթէ այս երկրի մէջ այնպիսի զօրեղ զործօններ, որոնց ոյժը եւ դրամական կարողութիւնը համեմատութեան եղա չունի հայութեան հետ, և թէ այնպիսի զօրեղ զործօններ, ինչպէս Կաթոլիկութիւնն է եւ Հրէութիւնը, ոչ մի ջանք ու դրամ չեն խնայում պահպանելու իրենց ինքնուրույնութիւնը, մէկը՝ իւր կրօնական, միւն՝ իւր կրօնական ու ազգային ինքնութիւնը պահպանելու, երկու կրելով թէ տարիներն ու անհոգութեան հետեւանքները կարող են կատարել այդ, ապա մեզ, Հայութեան համար աւելի եւս հարկադրական է մէր ինքնութիւնը պահպանելու մեծ խնդիրը:

Մի բան: Ինքնութիւն ասելով չպէտք է հասականանք հակառակ մատածողութեան, անվատահելի տարր եւ անարժան քաղաքացիներ այս երկրի մէջ ու համար: Այլ իւր էութեան ամբողջ գեղեցկութեամբ՝ Ամերիկեան լաւագոյն քաղաքացի:

Այս հոգն բնկնում է բնական է Առաջնորդարանի վերայ, քանի որ մի այլ ազգին կենտրոնական արժէք ունեցող հաստատութիւն չունինք: Մեր կուսակցութիւններն իրենք եւս գիտեն, որ չեն կարող եւ պէտք չէ, նոյնիսկ, որ ստանձնեն այդ չափաղանց փափուկ գործը:

Առաջնորդն այս տարի, ինչպէս եւ նախորդ տարիները, կենար: Վարչութեան ուշադրութիւնն էր հրաւիրած ինքը վերայ: Վարչութիւնը երկար ժամանակ, խորհրդածութիւններ նուիրած է խնդրոյն եւ որոշած: Ունենալ նիւ եորքի մէջ մի ժողով խորհրդակցական, որին պիտի մասնակցէին հիմնարկութիւնների, Հ. Բ. Լ. Միութեան, կուսակցութիւնների, Միութիւնների, Հայրենակցական կազմակերպութիւնների, ինչպէս եւ Հայ յարանուանական միւս եկեղեցների անդամականութեան վերէին Առաջնորդարանին Հայեցի հոգութեամբ գրակարգութեան գպրոցներ պահպանելու համար:

Այս ժողովը տեղի ունեցաւ Փետր. 19-ին, ժամը 2.30-ից մինչեւ 6.40:

Ժողովի սկիզբն Առաջնորդը համառօտակի պարզեց ժողովի նպատակը, ապա Կ. Վարչութեան կողմէ Պր. Խ. Պա-

պայեան ժամ եւ աւելի տեւող իւր բացատրութեամբ պարզեց խնդիրը իւր մանրամասնութիւններով:

Ժողովականները քննութեան առին հարցը բարձակողմանի կերպով եւ եկան այն եղակացութեան, որ 1) զործը կարեւոր է եւ էական, 2) իրեւ ներկայացուցիչներ իրենց հաստատութիւնների ոչինչ կրնան խոստանալ իրը նիւթական աշակցութիւն, 3) բարոյական աշակցութիւն ամէնքը կը բերեն:

Վերջնի ժամին չէր, անշուշտ, որ ժողովականներից մէկն ու մէկը եւ կամ Առաջնորդարանը պիտի կասկածէր այլ կար էական կէտ, թէ զպրոցներ, կանոնաւոր եւ ոչ պատահական կեանք ու ծրագրով զպրոցներ, ունենալու համար ներկայացրած շորջ \$20,000-ի ծախքն ինչպէս, ի՞նչ միջոցներով պիտի հոգացուէր: այս խնդիրը մնաց իւր սկզբնական կէտի վերայ:

Եւ պարզ է, որ եթէ չինէր էականը՝ դրամը, ապա պիտի երեւան չդար նաև զործը, ինքը չունէր, որ սկզբնական ծախքները հոգալով, ձեռնամուխ լինէր, յուսալով տարիների ընթացքի մէջ եւ յաջողիլ եւ օդակար ըլլալ:

Եւ զործը մնաց այնտեղ, ուր էր տարիներէ ի վեր:

Տեղական հոգաբարձութեանց, Եկեղեցիների, Տիկնանց Եկեղեցակի միութիւնների ելն. ձեռնուութեամբ, ըստ նախոյն, պահպանում են հետեւեալ ԴՊԲԸՆԵՐԸ:

1. Ռւար, 2. Բոստոն, 3. Լովլ, 4. Պրովինէնս (կէտ տարի ունեցած, յետոյ փակուած), 5. Նիու Յորք (Մայր Եկեղեցի), 6. Թրոյ, 7. Նիու Բրիտան, 8. Ֆիլատելֆիա Վ., 9. Ֆիլատելֆիա Ն., 10. Ֆիլատելֆիա Սէկանդ, 11. Սիրաքս, 12. Դիարոյտ, 13. Հարֆերտ, 14. Ապրինգֆիլտ, 15. Նայազարա-Ֆոլդ, 16. Ս. Կատերինս, 17. Գոլտ, 18. Բուրա, 19. Բուկնու-Այլէս, 20. Ս. Պաուլո, 21. Ն. Եորք, Ամիթաուն, Դպրոցակի Տիկնաներու աշակցութեամբ:

Դժբախտաբար մանրամասն տեղեկութիւններ, (վիճակագրական, ծրագրի, դասաւանդութեան, կազմի ելն. ժամանի) պակասում են եւ հնար չէ ժօտենալ այդ հարցին, ինչպէս նաև թէ որքան յառաջդիմութիւն ունին մէր այդ կարգի զպրոցները:

Այդպիսի տեղեկութիւններ ունինք միայն Բուէնոս-Այ-

րէսի 1927 Մայիս - 1928 Մայիս «Տեղեկադրի» մէջ, որից  
կ'երեւայ որ՝

«Մանուկներուն Ազգային զաստիարակութիւն  
տալրու մասնաւոր վարժարան մը ունենալ ցարդ ան-  
կարելի նկատելով, գէթ մասսամբ մը այս կարեւոր  
եւ էական պէտքին գոհացում տալրու համար՝ այ-  
ցելու դասաւու ունեցած ենք ժամանակ մը Պր. Հ.  
Մանուկներականը եւ այժմ սոյն պակասը կը լրացնէ մեր  
պաշտօնեան՝ Պր. Ա. Պապահեղեանը, որ աշակերտ-  
ներուն տունը այցելելով կը դասաւանդէ մայրենի  
բղուն:

«Վերջերս վարչութիւնս իր աջակցութիւնը նր-  
ուիրած է նաեւ հայաշատ քանի մի թագերու մէջ  
մասնաւոր գպրոցներ բանալու համար եղած ձեռ-  
նարկներու, ինչպէս Փուէնթէ Ալսինայի եւ Նուէվա  
Փոմպէայի մէջ։ Մասնաւոր գպրոցներ ունենա-  
լու կարելութիւն կ'ընծայեն նաեւ Աւենիտա տէլ  
թրարախօ, Լինիէրէս եւ ուրիշ հայաշատ թագեր»։

Թէ որքան ծախք է ունեցած գպրոցը՝ յայտնի չէ։ Նոյն-  
պէս եւ աշակերտուհիների թիւն անյայտ։

Առաջնորդն այս տարի այցելած է՝

Ասթօրիայի գպրոցը, 1927 նոյ. 18-ին, 1928 փետրվար  
19-ին եւ 24-ին։ Գպրոցն ունէր առաջին այցելութեան պա-  
հուն 27 փոքր (խառն), նոյն դասարանի մէջ, որ տրամա-  
դրած է տեղական High School-ի տեսչութիւնը։ Վարժու-  
չին է ծանօթ Տիկ. Աղ. Նիկողոսիան, ամսական՝ \$35-ով։  
Դպրոցը կը պահպանուի տեղական Եկեղեցական Տիկինանց եւ  
Հոգաբարձութեան օժանդակութեամբ։

Նիու Եորք, Մայր Եկեղեցի, այցելած է քանի մի ան-  
դամ։ Դպրոցը զեակուած է Եկեղեցու սրահի մէջ։ Հոգա-  
բարձութիւնն ընդ առաջ զնալով Դպրոցական Տիկինանց ցան-  
կութեան նախ փոքր ու անյարմար դասարանը լայնացրեց  
ծախսելով \$2,000 եւ նոր դասարան կարմեց։ կահաւորու-  
թիւնը հողացած է Դպրոցական Վարչութիւնը։ Ուսուց-  
չուհին է Կ. Պոլոսյ Դպրոցական Վարչութիւններէն Տիկ.  
Ա. Խօճասարեան։ Դպրոցն սկսուած է անցեալ տարի Հոկ-  
տեմբերին եւ վերջացած Յունիսին, Ամերիկան դպրոցնե-

րու հետ, 'որով աշակերտները այնուեղի գառերն աւարտելէ  
յետոյ դալիս են ժամը 3-4-ից մինչեւ 6-ը։ Այս ուսումն-  
արուաց մէջ նղած է հինգ բաժանում, որոնց հետ հերթով  
դրազած է ուսուցչուհին։ Առարկաներն են եղած 1) Հայե-  
րէն կարդալ, զրել, քերականութիւն։ 2) Ազգային պամտու-  
թիւն, տարրական։ 3) Եկեղեցու պատմութիւն, ըստ տօնե-  
րի։

Աշակերտների ընդհանուր թիւն է եղած 96, որոնցից  
45 աշակերտ եւ 51 աշակերտուհի, 10-15-16 տարեկան։ Այս  
տարի չըջանաւարտ են եղած չորս հոգի, երեք աղջիկ եւ  
մէկ տղայ։

ԿիրԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ ունինք,

Ուստի, հոգածութեամբ տեղական Հովուի եւ առաջ-  
նորդութեամբ Տիկ. Վ. Պէրպէրեանի, զործին սիրով նուրի-  
ուած 9 դասասաններով, ձրիարար, ուր ամէն կիւրակի յա-  
շախում են 150-170 աշակերտ (երկուու) նախկին 20-30-ի փո-  
խարէն։

2. Ֆիլատելիֆիա Վ., Երրորդ տարին է, որ Վ. Ֆիլա-  
տելիֆիայի Եկեղեցու Տան զնումով առանձին ուշադրութիւն  
է նուրիուած այդ չըջանի փոքրերու կիրակնօրեայ գպրոցի  
մերայ։ Գործը վարում է Տիկ. Աղ. Նիկոլուկան իւր չուրջն  
ունենալով 10-12 վարժուհիներ, ձրի, նախապէս պատրաս-  
տուելով եւ ապա դասարան մտնելով։ Ունին 120-130 երկսոն  
աշակերտ, 6-14-15 տարեկան։

3. Ֆիլատելիֆիա Ն., իւր Եկեղեցու գնումով այժմ աւելի  
պատեհութիւնն պիտի ունենայ կիրակնօրեայ գպրոցն, ինչ-  
պէս եւ հայ լեզուի ուսուցման գպրոցն աւելի առաջ տանե-  
լու, քանի որ ունի չառ աւելի յարմարութիւններ՝ զասա-  
րանների, առանձին բաժանումների համար, քան իւր նա-  
խորդի չըջանակի գպրոցները։

Հոգաբարձութիւնը տարուած գաղութի բոլոր փոքրը-  
ներուն դպրոց յաճախելու դիւրութիւնը տալ, մտադիր է  
ունենալ իւր սեփական ինքնաշարժ-հանրակառքը, որը պի-  
տի այցելէ բոլորի տները, ժողովէ եւ դպրոց բերէ։ Մի գա-  
զափարար, որ տարիներ առաջ տուած էինք չառ վայրերի մէջ  
եւ սակայն հաղիւ այժմ միայն մի տեղ զործադրութեան մէջ  
է։

4. Իւնիոն-Սիտի. Առաջնորդութեամբ Պր. Տիգր. Սըմսուրեանի եւ Տիկի. Մժսարեանի, ունի 50-60 աշակերտուհի և աշակերտ: Դպրոցի վայրն անյարձար լինելով (Եկեղեցու յետին եւ պարապմունքները Պատարազի ժամանակ), Հոգաբարձութիւնը մեր խորհրդով դիտաւորութիւն ունի զնելու Եկեղեցու շուրջն եղած երկու տները միացնել եւ տարածել դպրոց եւ հասարակական վայելուչ միջավայր, որն էրագործելու համար արդէն զնած է Ասորիների նախկին փոքր Եկեղեցին:

5. Ուստո-Փուլման, 6. Ռէյսին, 7. Բոստոն, 8. Փոքրաբեկ, 9. Ֆրէքմօ, 10. Ֆաուլէր:

Մանրամասնութիւններ չունինք վերջիններիս վիճակի մասին:

ԵկեղեցԱՄԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԵՐ ունինք հետեւել վայրերի մէջ—

1. Աստր, 2. Բոստոն, 3. Պրովիտէնս, 4. Նիու Եորք (Մ. Եկեղեցի), 5. Իւնիոն Սիտի, 6. Լորէնս, 7. Լովել, 8. Հարֆլորտ, 9. Նիու Բրիտան, 10. Թրոյ, 11. Դիտրոյտ, 12. Բինդհամտոն, 13. Սիրաքիւլ, 14. Շիկագո, 15. Վեստ Փուլման, 16. Ուոքէտոն, 17. Ռէյսին, 18. Սաութ-Միլուուքի, 19. Գրանդ-Խապիկս, 20. Վլիւէնս, 21. Ջիլատել-ֆիս Վ., 22. Ֆիլատելֆիլա Ն., 23. Ֆրէզնօ, 24. Ֆաուլէր, 25. Լու-Անջելոս:

Առաջնորդն այցելած վայրերի մէջ միշտ էլ յարմար առիթ է գտած ժողովներ ունենալու Եկեղեցակար Հայուհեաց, Միութեան վարչութիւնների եւ անհատների ներկայութեամբ, լսելու նոցա գժուարութիւնները, լուծել հնար եղած միջոցներով կնճիռները, աւելի գործնական դարձնել նոցա գոյութիւնն եւ աւելի օգտակար դարձնել Եկեղեցու, դպրոցի, կիրակնօրեայ վարժոցների եւ համայնքի ներքին հոգեկան կեանքի խնդիրները լուծելու, ինչպէս եւ նոցա օժանդակութիւնն ապահովելու Եկեղեցականներ պատրաստելու դորձի համար:

Դժբախտաբար Միութիւններն իրենք նեղ նիւթական վիճակի մէջ են եւ շատ բան անելու թէեւ ձգտումն ունին, սակայն անկարող են:

ԵՐԻԾԱՄԱՐԴԻՒՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ —

Երիտասարդ սերունդը, անխտիր, ի մի բերելու եւ նոցանից մի նոր ոյժ ու ազգակ կազմելու ջանքերը շատ ծանր չափազանց դանդաղ են առաջ գնում: Այս ջանքերը նոր չեն, սկսուած են տարիներից ի վեր: Խանդավառութեամբ ըսկըսում են, քանի մի ամիս շարունակուամ եւ ապա, կամ վերջանում, կամ քնչած դոյութիւն ունենում: Անշուշտ մնեծ նշանակութիւն ունի տեղական Հովհիւների կենդանի, սիրաշահող եւ առաջնորդող դեր ունենալու խնդիրը: Դրժամիստարար չունինք այդ ոյժը: իսկ այն տեղերն, ուր ունինք՝ դարձեալ անյաջողութեան են մատնուած այս տեսակի ընկերակցութիւնները:

Ծրջապատը, միջալայրը, քաղաքի արտաքին գրաւչութիւնը չափազանց մնեծ է եւ զօրեղ, իսկ մեր, հայութեան միջոցները եւ գաղափարն ընդ առաջ տանող հետարկնդող ոգին չափազանց թոյլ, որպէսզի կարող լինենք մրցի այս բարբար բացասող տարրերի հետ:

Նախկին «Երիտասարդաց Միութիւն» կազմութեան փուլաբէն կազմուեց —

ա) «Եղբայրակցութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» անունով ընկերակցութիւնը (1927 վետր. 21-ի գրութեամբ, 1926 նոյ. 17-ի կանոնագրութեամբ), որի առաջին ճիւղը ունեցանք՝

1. Ֆիլատելֆիս, 2. Նիու Եորք:

բ) «Եղբայրակցութեան» կանոնագրութեան շատ փոքր փոփոխութեամբ ունեցանք «Դստերք Հայաստանեայց Եկեղեցւոյ» Միութիւնը, որի առաջին ճիւղը բացուեց՝

1.— Ֆիլատելֆիլայի մէջ (1926 Եկել. 26-ին), որը տակաւին միայնակն է իւր տեսակին մէջ, եթէ հաշուելու ըլինինք միւս «Դստերք Հայաստանեայց Եկեղեցւոյ» Ուստորի մէջ, որ տակաւին կանոնագրութիւն չունի:

«Եղբայրակցութիւնը» աւելի եւս ոյժ ու ներքին միութիւն ունենալու համար Նիու Եորքի, Ֆիլատելֆիլայի երկու ճիւղերի ընդհանուր ցանկութեամբ ունեցան իրենց կենտրոնացութիւնը, որի հական նպատակն է 1) պահպանել ներկայ ճիւղերը եւ զօրացնել եւ 2) աշխատի տարածել «Եղբայրակցութիւն» իրը զօդող միութեան կազմ Ամերիկայի բո-

լոր հայ գաղութների մէջ, ուր զոնէ Հայ Եկեղեցիներ եւ հոգարարձութիւններ կան: Այդ վարչութեան նախազահողն էր Առաջնորդը, որի մասնակցութեամբ «Եղբայրակցութեան» կենար. Վարչութիւնն ունեցած է հինգ ժողով, Ն. Եորքի մէջ,- ժողովների էական խնդիրն է եղած 1) վերակազմել նիու Եորքի «Եղբայրակցութիւնը», որ անկենդան մարմին դարձած է: Այս մասին յանձնաբարուած էր տեղական մարմին ժողովի հրաւերել անդամները, ուր Առաջնորդն եւս ներկայ պիտի լինէր եւ խօսէր: Ժողովը տեղի չունեցաւ, զի միայն 2-3 հոգի էին եկած: 2) Տարածել «Եղբայրակցութիւնը» զանազան Եկեղեցիների հետ կապուած երիտասարդութեան մէջ. այս նպատակաւ կենար. Վարչութեան Ատենապետը, Պր. Լեռոն Զինեան երկու անդամ Թրոյ եւ մի անդամ Իւնիոն-Սիտի ուղարկուեց: Խօսած է, խոստումներ առած, սակայն դեռ եւս կարմակերպութիւնը կերտուած չէ այդ վայրերի մէջ: Այս նոյն նպատակով խօսած է նաեւ Առաջնորդը Ն. Ֆիլատելիքայի Հովուի եւ Հոգաբարձութեան հետ, հաստատելու իրենց երիտասարդութեան մէջ եւս «Եղբայրակցութեան» ճիւղ. խոստացած են, սակայն արդիւնք գեռ եւս չկայ: Նոյն նպատակով խօսած է նաեւ Շիկաքոյի եւ Ռէյսինի Հովիւ ու Հոգաբարձութեան հետ. արդիւնք գեռ եւս չկայ: 3) Եղած մասնաճիւղերն իրար կապել աւելի զօրեղ կերպով եւ Արեւելքի «Եղբայրակցութիւնը» կապել Արեւմուտքի «Եղբայրակցութեան» հետ:

Երբ Արեւելքի մէջ «Եղբայրակցութեան» գաղափարը ծնունդ եւ մարմին առաւ, համարեա, միաժամանակ հաստատուեց այստեղ, Ֆրէնոյի մէջ, «Եկեղեցասիրաց Միութիւն Հայաստանեաց Եկեղեցւոյ» («Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութիւն») անոնով, որոնց ծրագրը, թէեւ փոքրինչ տարբեր, սակայն նպատակն ու ձգտումը՝ նոյնը: Այդ Միութիւնն է, որ ապագային կարող եղաւ հրատարակել «Փարոս» ամսաթերթը:

Երկու «Եղբայրակցութիւնները» միանալու, միատեղ եւ միեւնոյն ծրագրով՝ գործելու գաղափարը լաւագոյն ընդունելութիւն գտաւ երկու վարչութեանց առաջ եւ այս խնդիրը բաւական ժամանակ խեց (մանաւանդ անուան յորչորչումը), ինչպէս յարաբերութեանց մշակումը, որ տակա-

ւին վերջացած խնդիր չէ, իւր մանրամասնութեանց մէջ, եւ սակայն սկզբունքով ընդունուած է միանալ եւ միասին գործել:

Տակաւին մէր մէծերն ու հասակաւորները այն զօրեկ ներքին ինքնազիտակցութիւնը չունին, առիթ տալու եւ միջոցներ հայթայթելու մէր երկսեռ երիտասարդութեան ինքնուրոյն կազմով, մէծերի ներքին նպատակները գործադրելու աշխատութեան լծուիլ, որպէսպէ ապագայ Հայ Եկեղեցին կազմակերպուած ու զիտակից ոյժերի ձեռք յանձնուի, ինչպէս որ այդ տեսակէտից յարանման միաք յլացած եւ գործադրած է Հ. Բ. Բ. Միութեան Ամերիկայի Կետրոնը «Կրտսերներու Լիգա» («A. G. B. U. Junior League») առունով:

Ապագան պիտի ցոյց տայ, թէ որքան յաջողութիւն պիտի ունենան «Եղբայրակցութիւնները», «Դատերը» եւ «Կրտսերներու Լիգան»: սակայն այդ յաջողութեան էական պայմանն է մէծերու, փորձառու զիտակցութեամբ օժտը ուածներու կատարեալ աջակցութիւնը, որպէսպէ «Մանուկը ապագայ Հայը» զարնայ:

Իրբեւ ՀՈՒՍՅ ԲԱՆՅԻ իրբեւ Հայը ու Բարեկամ այս ժողովրդի եւ ամէնքիդ, պիտի յորդորէինք խնդիրներուն նայիլ իրբեւ Հայ Եկեղեցու շահների եւ ոչ այլ տեսակէններից: Այս Եկեղեցին կարօտ է կարող զեկավարի, որ յոյս ունինք ամէնքիդ խոհական խմասութիւնը պիտի կարող ըլլայ գտնել եւ հրաւիրել: Այս Եկեղեցին կարօտ է բանիբուն եւ սրտապեղ պաշտօնեաներու, որոնք իրբեւ Հովեւոր կեանքի մօտաւոր զեկավարներ մէր ժողովրդի Հովիներու՝ իրենց կեանքով ու օրինակով գրաւել մազնիսը լինին զէպի այդ Եկեղեցին: Ուստի պիտի յորդորէինք Հովեւոր պաշտօնեաները՝ ամէնչն առաջ լինիլ Եկեղեցւոյ պաշտօնեայ, հեռու մնալ կրքերի եւ Հովերու խառնարաններէ, որոնք միմիայն իրենց պիտի նուաստացնեն: Հովեւոր կապուիլ այն Եկեղեցւուն, որին պիտի զիտանան ծառայել իրենց մաքի պատրաստութեամբ, պիտի զիտանան իրենց գրաւել մէր երիտասարդ սերունդը, Եկեղեցին նոցա գրաւել զարձնելու գաղտնիքը դանալով, իրենք պիտի ըլլան բարեկարգութեան այն խա-

ըիսխը, որ այնքան կը հրահրուի, եւ տակաւին քայլ իսկ արուած չէ, քանզի միջավայրն ու իրենք՝ տարբեր են։ Հայ Եկեղեցու բարեկարգական խնդիրը ժամանակի պահանջ է, սակայն գիտակից ձեռքերու եւ պատասխանատու մտքերի գուգաղբած գործունէութենէ, եւ ոչ անպատասխանատու լեզուներու կառուցման ճիգերով։

Պիտի յորդորենք մեր Եկեղեցու աշխարհիկ պաշտօն- եաներն եւս աւելի փարուիլ գործին, յանուն այս Եկեղեցու եւ ոչ այլ գլուխներէ։ Անձը շփոթել էութեան հետ եւ անձ- նական անսութիւնները հանրական ինդիբներու վճռելու հիմք զգոյշ մնալ։ Զմոռանան, որ եկած են «Ժառայիլու»։ Այս հոգին է, որ պիտի ուժեղ գարձնէ այս Եկեղեցին, այն եւս Ամերիկայի մէջ, մի երկիր, որ այնքան անակնեալիք ունի տալու, գորացնելու և նոյնքան եւս՝ առնելու, տկա- րացնելու։

Պիտի ցանկանայինք, որ Երեսփոխանական ժողովն իւր իրական բարձրութեան վերայ լինէր, ոչ միայն իրը անուն, այլ իրը էութիւն։ Եթէ Եկեղեցուն «օգտակար» ըլլալու հա- մար իւր հոգեւոր պաշտօնեալին կը պահանջուի որոշ «վարկ» եթէ գարտական հիմնարկութիւնները առաջին իսկ պահանջը գատաւորի աթոռ գրաւելու համար «վարկ»ի խնդիրը կը չ'նէ (ինչ որ եւ արգարացի եւ օգտակար հասարակական տնօս- կիտից), ցանկալի պիտի լինէր որ Հայ Եկեղեցու Երեսփո- խանական ժողովն եւս այլ «վարկ»ի անձերէ բազկացած լի- նէր։ Այս ցանկութիւնը պարաւուի քննազատութիւն չէ։ Քա՛ւ լիցի։ Մեր ջերմ ցանկութիւնն է տեսնել ոչ միայն մի- տեղ, այլ ամէն տեղ, Հայ Եկեղեցու մէծութիւնը։

Այս հոգւով կ'օրհնենք ամէնք, որ տարիներ շարունակ մեր թուլութիւնները տարած, ճիգերը քաջալերած, հոգե- րուն հոգեւին ջանագիր եւ փոյթերուն արիաջան գործակից էք եղած։ Ամէն քայլափոխի ամէնքիդ նկատմամբ մեր ար- դարացած ենք կամեցել տեսնել “The Mind is the Standard of the Man” ասացուածքը։

Հայրական Օքնութեամբ եւ սիրով,  
ՏիրԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հ. Ամերիկայի  
Հրաժարեալ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1928 Հոկտ. 7-8 Երեսփ. ժողովին Համար

Կրօնական ժողովը ընտրուած անցեալ տարուան մայիս 15-16 Երեսփ. ժողովէն, 1927 Յունիս 17-էն մինչեւ օրս ունեցած է 30 կանոնաւոր եւ մի քանի խորհրդակցական ժողովներ։

Իր շուրջ մէկ ու կէս տարուան շրջանին մէջ, Կրօնական ժողովը ունեցած է 108 խնդիրներ, որոնք կրնանք բաժնէն ։ Կարգերու։ Կրօնական, կարգապահական եւ ընկերական խնդիրներ։

1. Կրօնական խնդիրներու գլխաւորներն եղած են, ըստ Հայ. Եկեղեցւոյ կարգաց եւ կանոնաց, կիրակի օրերը պատկանել, տուներուն եւ սրահներուն մէջ պատկան մէկրութիւն չկատարել ուր որ Հայ Եկեղեցի կայ, եւ ն. Ս. Օծութեան հրամանաւ, Ս. Հաղորդութեան եւ խոստավանութեան մա- սին Եկեղեցւոյ օքնչները յիշեցնել ժողովրդեան, ճաշու Ս. Աւետարանը եւ Առաքելոց թուղթերը կարգացուելէ յետոյ թարգմանել զանոնք եւ կամ քարոզի նիւթ ընել, անպաշտօն քահանայից եւ տւագ-սարկաւագաց թուլլարել աշխարհիկ պատուաւոր գործերով զրագելու Առաջնորդի արտօնու- թեամբ եւն։

Ինչպէս կը տեսնուի, ներկայ գարու պահանջը նկատի առնելով, եւ մանաւանդ նկատելով, որ Հայ Եկեղեցին ի՞ն հաստատութիւնն ի վեր զանազան շրջաններու մէջ կատա- րած է բարեկիստումներ ժողովրդեան հոգեկան պահանջնե- րուն զահացում տալով՝ ամրապնդելու ժողովրդեան հաւատ- քի զգացումները եւ արդարէսով կապելու զանոնք Եկեղեցւոյ հետ եւ պահելու Եկեղեցւոյ ծոցը, անխախտ պահելով մի- անդամայն Հայ Եկեղեցւոյ հիմնական տեսակէտները դաւա- նանքի եւ վարդապետութեան նկատմամբ, Կրօն. ժողովս դիմումներ կատարած է Վեհ. Հայրապետի մօտ, եւ ն. Ս. Օծութիւնն ալ իր իրաւունքի սահմանին մէջ եղած խնդիր- ներու մասին իր բարձր համութիւնը տուած է, թողլով միւս խնդիրները ընդհանուր Եկեղեցական սահմանագիր ժողովի մը։

2. Կարգապահական խնդիրներ - կրօն. Ժողովի նկրբառումն եղած է ըստ ամենայնի յարգուած տեսնել Հայ Եկեղեցին օտարներէն և մերայիններէն, սակայն իր պաշտօնավարութեան շրջանին դիտած է, որ մերայինք չեն ուզեր յարգել եկեղեցական կարգ ու կանոնք: Զորօրինակ, տունելու եւ սրաններու մէջ պատկ կամ մկրտութիւն չկատարելու մասին կրօն. Ժողովի հրահանգներուն չի կամենար ընդ առաջ երթալ, այդ պատճառաւ եկեղեցւոյ պաշտօնէութիւնը շատ անդամ կը գտնուի անել վիճակի մէջ, որովհետեւ մէկ կողմէն ջանապիր է զործադրել հրահանգը եւ միւս կողմէն իրեն դէմ կը գտնէ նախորդ ասքիներէ ժառանգուած արմատացեալ անկարգութիւններն, եւ այն տեւական սպառնալիքը, թէ «օտար եկեղեցական մը կը կանչուի»:

Յաւալի է խոստովանիլ, թէ ոչ միւրյն աշխարհական պաշտօնէութիւնք, այլ նաեւ եկեղեցականք ունեցած են Հայ Եկեղեցւոյ կարգաց եւ կանոնաց հարկաւակ չեղումներ, նոյնակ ըմբռոստացումներ հոգեւոր իշխանութեան դէմ, առանց կը սերու թէ այդ յաւալի վիճակը որչափ դառն հետեւանքներ պիտի ունենայ Եկեղեցին ընդհանուր վիճակին վրայ: )

Այս երկու պարագաներուն մասին կրօն. Ժողովը իր ցաւը յայտնելով, կը ներկայացնէ զանոնք Պատ. Ժողովոյդնկատառութեան, որպէսողի զարման մը խորհուի եւ առաջքը առնուի ընդ միշտ ար տխուր վիճակին:

3. Ընկերական կեանք - կրօն. Ժողովս ունեցած է 8 ամուսնալուծման խնդիրներ, որոնցմէ մին մերժուած է, ուրիշ մը հաշտուած են, 2 հատը զրկուած են կ. Պօլսու Պատրիարքարան, իսկ 4 հատը ամուսնալուծուած է յետ մանրակրկիտ քննութեան եւ ի հարկէ ստիպեալ:

Կրօն. Ժողովը միշտ աչքի առջեւ ունեցած է, թէ Հայ Եկեղեցին անհնարին դէպեքերու մէջ միայն կարեւոր տնօրինութիւններ կ'ընէ, նկատի ունենալով, որ այսպիսի ոչ ցանկալի դէպեքերը պակսին եւ ոչ թէ աւելնան, այս պատճառաւ դժուարութեանց կ'ենթարկէ եւ շատ ծանրադոյն պարագաներու մէջ է, որ կը լուծէ:

Ասոնցմէ զատ, կրօն. Ժողովս իր խորհրդակցական ժողովներուն մէջ նկատի առած է նաեւ, թէ ի՞նչ միջոցներով կարելի պիտի ըլլայ Հայ Եկեղեցւոյ դոյութիւնը պահպա-

նել Ամերիկայի մէջ, Հայ ժողովուրդը պահել Հայ Եկեղեցւոյ ծոցը եւ հետաքրքրել անով, ներկայ սերունդին սիրելի դարձնել Հայ Եկեղեցին եւ Հայ Լեզուն, որպէսողի հետաքրքրութիւններ Հայ Եկեղեցիով եւ հաւաքուին անոր շուրջ:

Սոյն յոյժ կարեւոր խնդիրներն ալ Պատ. Ժողովոյդնկատառութեան կը յանձնուի եւ հաւատ մեծ ունինք որ Պատ. Ժողովի պիտի երկար ժամանակ տայ սոյն խնդրոյն մասին միջոց մը գտնելու համար:

Ահա կրօն. Ժողովիս միամեայ գործունէութեան համառօտ տեղեկադիրը, որ կը ներկայացնուի պատկառելի Ժողովոյդի ի նկատառութիւն:

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ա.ԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵՍՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՅ  
ԱՌԱՋՈՒՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

1927 Մայիս 16 - 7 Հոկտեմբեր 1928

Պատկառելի Երեսի. Ժողովին,

Տեարք Երեսփոխանք,

Կեդր. Վարչութիւնս Ս. Առաջնորդ Հօր հրաւէրով պաշտօնի ձեռնարկեց 1927 Յունիս 13-ին, որով այս տեղեկագիրը կը ներկայացնէ Կեդր. Վարչութեանս 1 եւ մէկ-երրորդ տարուան (մէկ տարի եւ չորս ամիս) գործունէութեան ամփոփումը:

Կեդրոնական Վարչութեանս ներկայ կազմն է .-

Տ. Տիրայր Ս. Արք. - Նախագահ եւ Առաջնորդ.

Տ. Ղեւոնդ Վրդ. Մարգուկիսեան - Առենապետ

Տ. Մերովը Ա. Քչն. Ներշապուհ. - Առենապետի

Կրօնական Ժողովի

Տ. Յարութիւն Քչն. Մարգիսեան - Կրօն. Ժողով

Տ. Արքէն Քչն. Թորոսեան

Տ. Աթիկ Քչն. Ծոցիկեան

Պ. Հայկ Խօճասարեան - Առենապետ Տնտես. Ժողովի

Պ. Խոսրով Պապայիսեան - Առենապետի

Պ. Տիգրան Մասարեան - Գանձապահ

Պ. Մալաք Պէրպէրեան - Տնտեսական Ժողով

Պ. Արամ Ճէրահեան

Կրօնական Ժողովի անդամ քնտրուած Տ. Մատթէոս Քչն. Ճէրիմեան ստանձնեց եւ շարունակեց իր անդամակցութիւնը Կեդր. Վարչութեանս՝ մինչև 1928-ի Մարտի վերջերը, որմէ յետոյ ներկայացուց կրկնակ պարզ հրաժարական. այս հիմումը ալ Կրօն. Ժողովը իր եւ հետեւարար Կեդր. Վարչութեանս անդամակցութեան հրաւիրեց Տ. Աթիկ Քչն. Ծոցիկեանը, որ առաւելագոյն քուէն ստացած էր:

Առաջնորդարանի քարտուղարութեան պաշտօնը, ըստ նախընթացին, ձեռնասօրէն վարեց Պ. Տիգրան Փաշալեան:

Կեդր. Վարչութիւնս իր պաշտօնավարութեան այս շըրջանին ունեցած է 40 նիստ, որոնցմէ 7-ը խորհրդակցական

եւ 33-ը օրինական. կազմակերպած է Երեք լայն խորհրդակցական ժողովներ. քննած է շուրջ 70 խորհրդներ. կայացուցած է 274 որոշումներ. նիստերու միջոցին կարգացուած են 350-է աւելի զրութիւններ եւ զեկոյցներ:

Տնտեսական Շողովը իրեւ առանձին մարմին գործած ըրլաւով անոր վերաբերեալ բոլոր խորհրդները ներկայացուած են Կեդր. Վարչութեանս ի կարգադրութիւն:

Կեդր. Վարչութիւնս իր առաջին նիստերու ընթացքին քննութեան առաջ կացութիւնը, կազմեց իր անմիջական գործունէութեան ծրագիրը եւ տպագրեալ ըլչարերական յայտարարութեամբ մը յայտնեց Հովիւներուն, Հովարարձութիւններուն եւ մամուլի միջոցաւ նաև ժողովուրդին:

Միեւնոյն ատեն մշակեց նաև ներքին ծրագիր մը Հովարձութեանց հետ յարաբերութիւններու, թեմական առկաի տուրքերու, Առաջնորդարանի պարագերու ձշունմի, կրթական հարցի, հանդանակութիւնն, Առաջնորդարան Ին. ընկերու, եւայլնի մասին եւ իր ովանն ջանաց իրականացնելու զանոնք եւ պիտի շարունակէ աշխատիլ Պ. Պ. Իրաւուխաններու, Հովիւններու եւ Հովարարձութիւններու վստահութեամբը եւ անմիջական աջակցութեամբը:

Ակնարկուած ինդիրներէն մի քանին ունին առաջնակարդ նշանակութիւն. այդ հասկացողութեամբ ալ անհրաժեշտ կը համարենք կանգ առնել անոնց մասին, համառօտ կերպով:

Վիճակարգական. - Վիճակարգական թիւերու եւ տեղեկութիւններու նշանակութիւնը այնքան պարզ, բայց գըժքախտարար այնքան ալ անտես առնուած եւ շատ դժուարութիւններու հետ կապուած ինդիր մըն է: Պատրաստեցինք եւ հարկ եղած տեղեր զրկեցինք վիճակարգական հարցարան մը: Յարդ լեցուած եւ վերապարձուածները հրահանգիչ են:

Մասնաւոր խնամքով կարգի դրուեցան եւ քարտերու դրութեան վերածուեցան Առաջնորդարանին ներկայացուած մկրտութեանց եւ պսակներու արձանագրութիւնները:

Մեր ստացած հարցարան-պատասխաններէն եւ առձեռն եղած նիւթերէն կարելի է եղբակացնել որ Ամերիկայի մեր Առաջնորդարական ըրջանին մէջ, Գալիֆորնիան զատ, ունինք 36 թեմ-հոգարարձութիւն, 14 սեփական եկեղեցական չէնք, 14 մշտական վարձով եկեղեցիներ: Հովիւններու ընդհանուր

թիւն է 24, վարդապետ եւ քահանայ : Եկեղեցական նիւթական ընդհանուր անշարժ եւ շարժական հարստութիւնը կը զնահասութիւնը \$500,000 : 36 հոգաբարձութիւններու տարեկան ընդհանուր իրական մուտքն է չուջ §75.000 :

Կրթական .— Սահմանագրութեան 47-րդ յօդուածով ուրոշ պարտականութիւն դրուած է Կեղը . Վարչութեան վրայ չող տանելու ամերիկահայ նոր սերունդի կրօնական եւ աղդային կրթութեան : Դժբախտաբար կարեւոր զործ մը կատարուած չէ եւ Կեղը . Վարչութիւնս կացութիւնը գտաւ անկազմակերպ : Խւրագանչիւր մեծ ու փոքր գաղութ մտահաղուած է այդ խնդրով . շատ տեղեր արդէն կազմակերպուած են յետմիջօրեայ վարժարաններ , տեղ տեղ ալ կիրակնօրեայ գոլրոցներ , բոլորն ալ իրարմէ անկախ եւ շատ վայրերու մէջ հոգաբարձութիւնները ուղղակի կերպով մտահակից եւ զեկավար չեն այդ կենսական զործին : Կացութեան զայնման մը տանելու եւ միջոցներ նախապատրասելու համար , հրաւիրեցինք Ամերիկահայ բոլոր կազմակերպութիւնները , մամուլը , մօտակայ հոգաբարձութիւնները եւ գոլրոցական վարչութիւնները խորհրդակցական նիստի , 1928 Փետրվար 18-ին :

Ժողովը ունեցաւ բարոյական նշանակութիւն , բայց Կեղը . Վարչութեան նախատեսած միջոցներու զործադրութիւնը կը կարօտի դրամի եւ ժամանակի :

Ցարդ ստացուած վիճակագրական պատասխանները եւ եղած առձեռն նիւթերը նկատի ունենալով , կրնանք ըսել որ մեր Առաջնորդական վիճակին մէջ , Գալիֆորնիան զատ , ունինք 45 յետմիջօրեայ վարժարաններ , չուրջ 2000 աշակերտ աշտկերտուհիներով , 3-4 կիրակնօրեայ վարժարաններ :

Առ հասարակ այս վիճակագրական թիւերը լրիւ եւ ամբողջական ճշգութեամբ չեն . ըստ որում մեր դրկած վիճակագրական հարցարաններու պատասխանները տակաւին ամբողջին ստացած չենք : Կեղը . Վարչութիւնս կը հետապնդէ զործը եւ ամենամեծ հաւանականութեամբ մինչեւ տարեկերջ կարելի պիտի ըլլայ լրիւ պատկեր մը ներկայացնել :

Առաջնորդարանի պարտք ու պահանջի ճշգում .— Կեղը .

Վարչութիւնս ստիպուած եղաւ իր անդամակիցներէն կազմել յանձնախումբ մը Առաջնորդարանի պարտքերու ճշգումին համար , ըստ որում նախորդ Կեղը . Վարչութիւնները իրենց ժամանակին վերջնական եւ որոշ կարգադրութիւնները ըրած չըլլալով այդ մասին , կային տարակարծութիւններ եւ մտաւանդ կը պակսէին բաւարար վաւերաթուղթեր :

Ծանր եւ երկարատես աշխատութենէ յետոյ միայն կալելի եղաւ ճշգել եւ արձանագրել Առաջնորդարանի պարտքերը՝ 1927 Մայիս 1-ի համար , ըստ հետևեալին .

1927 Մայիս 1-ին , կը պահանջէին .

Ա . Առաջնորդ Հայր ,	Տիրայր Ս . Արքեպ .	4500 · 00
Քարտուղար Պ . Տ . Փաշալեան		488 · 50
Նախկին քարտուղար Տ . Արիկ Քինյ . Ծոցիկեան		113 · 65
Մայր Արքուն , Էջմիածինի , Միունիօրինութեան եւ կարողիկոսի հաշուոյն		178 · 15
Պօլոսյ Ս . Փրկիչ Հիւանդանց , Օրացոյցներու հաշխ		220 · 05
Եկեղեցականներ պատրասելու կիմնադրամ		350 · 00
Երեւանի աղէտեալներու օգնութեան հաշխ		50 · 00
Ճանապարհածախսնի ժողովականներու		235 · 60
1920-ի Կաք . Պատուիրակ Տ . Խորեն Արքեպ .		420 · 00

Համագումար . . . . . \$6555 · 95

Ա . Առաջնորդ Հօր պահանջը՝ \$4500 , մնդունուեցաւ իրեւեւ իրաւախոհութիւն ի հաշիւ իր ներկայացուցած \$8933 · 43 պահանջի զումարին :

Տ . Խորեն Արքեպ .ի \$420-ի պահանջը տակաւին ստուգուած եւ ընդունուած չէ . այդ մասին խնդրուած են հնարաւոր մանրամասնութիւն եւ տեղեկութիւններ :

Իսկ հոգաբարձութիւններէ եղած պահանջներու մասին Կեղը . Վարչութիւնս նկատի ունեցաւ ցուցակ մը , ըստ որուն մեր պահանջներու զումարը պիտի ըլլար \$13,000 : Այս զումարներու մասին Պատկ . Երեսփ . Ժողովը իրաւասութիւն տուած էր Կեղը . Վարչութեանս իրաւախոհութեան դաւ հոգաբարձութիւններու հետ եւ որոշ ձեւակերպուած արդիւնքներու համար : Այս ուղղութեամբ ալ Կեղը . Վարչութիւնս վերջնական կարգադրութիւններ եւ համաձայնութիւններ ունեցած է շարք մը հոգաբարձութիւններու հետ ,

բայց տակաւին առկախ կը մնան քանի մը կարեւոր հոգաբարձութեանց կարեւոր գումարներով պարտքերու խնդիրը, որ անտարակոյս պիտի կարգաւորուի ժամանակի լութացքին:

Պէտք է նկատի ունենալ որ հոգաբարձութիւններէ մեր ունեցած պահանջներու գումարները հաշուուած են մինչեւ 1927-ի Դեկտ. 31-ի թուականով, քանի որ թեմական տուրքերը կ'որոշուին իւրաքանչիւր տարուան Յունվ. 1-31 Դեկտի հաշուով:

Հստ եղած տեղեկադրութեան՝ պահանջ ունինք նաեւ Տ. Բարդէն Ս. Եպիսկ. է, §517.52: Այս մասին հարկ եղած սուռութիւնը պիտի կատարուի:

Կեդր. Վարչութիւնս քննեց նաեւ նախընթաց տարի Պ. Տ. Քըրքի ղեկավարութեամբ կատարուած \$100,000-ի հանդակութեան հաշիւներն եւ հաստատեց զայն հետեւեալ որոշումով – ա) Կեդր. Վարչութիւնը, յետ հաշուեքննութեան, նկատի ունենալով որ Պ. Տ. Քըրքի ներկայացուցած հաշիւները ճիշտ են եւ լրիւ, կը հաստատէ զայն. բ) Նկատի ունենալով որ Պ. Տ. Քըրք այս հանդակութեան աշխատանքները կատարած է անձնութիւրաբ եւ որեւէ պահանջ չէ ներկայացուցեր այդ առթիւ, ժողովը Պ. Տ. Քըրքի կը յայտնէ իր գնահատութիւնը եւ չորհակալութիւնը. գ) Ժողովը նկատի ունեցաւ նաեւ որ հանդակակութեան արդիւքը համապատասխան եղած չէ ծախսերուն, սակայն ընդունուեցաւ որ այդ եղած է Պ. Տ. Քըրքի կամքէն անկախ, զանազան պարագաներու բերումով:

Այս հանդակակութեան գուտ արդիւնքն եղած է §1296.65:

Յարաբերութիւններ Հովիւներու եւ Հոգաբարձութիւններու հետ: Նոր կազմուած Թեմիք եւ Հոգաբարձութիւններ – Եկեղեցական եւ ազգային կեանքի գործօն տարրերն են Հովիւնները եւ Հոգաբարձութիւնները. անոնք են որ կը կատարեն անհրաժեշտ գործունէութիւնը տեղական կեանքին մէջ եւ միեւնոյն տաեն, ըստ սահմանադրութեան, պէտք է ըլլան նիւթական եւ բարոյական սիւները Առաջնորդարանին:

Կեդր. Վարչութիւնս միշտ ջանացած է կանխելու եւ կարգադրելու հոգաբարձական եւ թեմական ներքին խնդիրները, երբ առիթ ներկայացած է, եւ իր կարելին ըրած է զա-

նոնք սիրալիր յարաբերութեան մէջ պահելու:

Այս շրջանին բացառիկ խնդիրներ պատահացան Թրոյ-Ռութրվլիլով, Շիքակո, Լոուէլ, Փրավիտէնս, Եւայլն. Կեդր. Վարչութիւնս զրկեց իր ներկայացուցիչները եւ ըրաւ նպատակայարմար կարգադրութիւններ:

Մեր մէծագոյն դժուարութիւնը եղաւ սակայն Պոստոնի Հոգաբարձութեան յարուցած յարաբերութեանց խզումի խնդիրը եւ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ՝ (Նիւ Եորք 30-րդ փողոց) Հոգաբարձութեան հինէն փոխանցուած հարցերը:

Պոստոնի Հոգաբարձութիւնը 1927 Դեկտ. 31 թուակիր պաշտօնադրով կը յայտնէր, որ խզած է իր յարաբերութիւնները Առաջնորդարանի հետ, քանի որ Ս. Առաջնորդի ղէմ իրենց ունեցած բողոքները նկատի առնուած չեն Երևանի փոխանական ժողովի մէջ եւ կ'աւելցնէր որ գիմած է վեհ. Հայրապետին:

Իսկ Պոստոնի Հովիւր, հակառակ Սահմանադրութեան արամագրութեան եւ Կեդր. Վարչութեան կողմէ եղած հարցումին, ցարդի ղեկավարութիւն տեղեկագրած չէ Ս. Առաջնորդին՝ նոր Հոգաբարձութեան ընարութիւնը:

Մեր կարելին ըրինք համոզելու Հոգաբարձութիւնը թէ եղած քայլը հակառահմանագրական է, թէ Ս. Առաջնորդի ղէմ զանգատ կամ բողոք ներկայացնելու եղանակը սահմանադրութեան մէջ որոշ է եւ թէ վերջապէս Ս. Առաջնորդ Հօրդ ղէմ որեւէ դժուարութիւն եւ բողոք չեն կրնար հիմ ըլլալ առկախելու Հոգաբարձութեան ղեկի Առաջնորդարան ունեցած պարաւոց եւ իրաւաց կատարումը: Այս մասին նոյնիսկ անպաշտօն կերպով միջնորդի ղեր կատարեց Քալիֆորնիոյ նորբնատիր Առաջնորդ Տ. Գարեգին Եպիսկ. Կեդր. Վարչութիւնս առաջարկեց որ Հոգաբարձութեան ներկայացները առիթ Եկեղեցւոյ նիւ Եորք զան Կեդր. Վարչութեան հետ խորհրդակցելու եւ բնականոն յարաբերութիւններ վերահստատելու համար:

Սակայն ցարդ խնդիրը կը մնայ առկախ. Պոստոնը կը պնդէ իր յարաբերութիւնները խզած ըլլալու յայտարարութեան վրայ:

Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան խնդիրը արդէն ծանօթ է. Շարժական Օծուած Վէմի վրայ պատարագելու խնդիրն է, ընդգէմ նաեւ Ս. Առաջնորդ Հօր-

և ւ կրօն . Ժողովի որոշումներուն :

Կեդր . Վարչութիւնս սկիզբէն եւեթ ընդունեց իրաց վիճակի չարունակութիւնը առժամապէս եւ յարաբերութիւնները պահեց Հովհաննի եւ Հոգարարձութեան հետ բնականոն եղանակով :

Միաժամանակ անդամ մը Կեդր . Վարչութեանս երկու ներկայացուցիչները եւ ուրիշ անդամ մըն ալ Ս . Առաջնորդ Հայր անձամբ եւ Կեդր . Վարչութեան անդամները յատուկ տեսակցութիւններ եւ խորհրդակցութիւններ ունեցան Հոգարարձութեան հետ , բայց դժբախտաբար խնդիրը կը մընայ իր վիճակին մէջ :

Անհրաժեշտ կը համարենք յայտնել որ այս երկու Հոգարարձութեանց եւ Ս . Առաջնորդ Հօր հետ կապուած խընդիրներուն մէջ , Կեդր . Վարչութիւնս ունենալով հանդերձ իր ներքին բարոյական հասկացողութիւնը , կողմ եղած չէ եւ կը ջանայ խնդիրը կարգադրել ասհմանագրութեան ողբին եւ ընդհանուր շահերու համաձայն եւ եթէ մինչեւ այժմ կարելի եղած չէ որո՞ւ ելքի մը յանդիլ , այնուամենայնիւ յոյս ունինք որ Պատկ . Երեսի : Ժողովի նոր որոշումները եւ Կեդր . Վարչութեանս համբերաար քաղաքականութիւնը պիտի նպաստեն կացութեան գարբանումին :

Նոր թիմեր եւ Հոգարարձութիւններ կազմուած եւ հաստատուած են , Ասթօրիա , Լ . Ա . եւ Տիթոյթ-Տէլլէ :

Հովհանները եւ Հոգարարձութեանց մէծ մասը հրաւիրուած են իրենց պարագանութիւններուն եւ աւելի զարգանալու ապահովութիւնը կը ներկայացնեն ; սակայն կան նուել թիմեր , որոնք պէտք ունին կազմակերպչական յատուկ խնամքի եւ ուշադրութեան , ինչպէս ևն Քանատա , Քլիմիէնտ չ Հարթֆրատ , Լորէնս , Եփակարաֆօլս , Փօրթլէնտ , Իիչմընտ , Սփրինկիլտ , Եւալլին :

Բայմաթիւ զաղութիւններ կան , որոնք տակաւին չունին Հոգարարձութիւն եւ որոնց կազմակերպումը մէծապէս օդակար պիտի ըլլայ զաղութիւն :

Բանի մը տեղեր , ինչպէս Պրուքլին , Ռութրըվիլիտ , Եւալլին , կան Եկեղեցաշխաց Յանձնախումբեր :

Գալիֆորնիոյ Բաժանումը եւ Գալիֆորնիոյ Առաջնորդ Տ . Գարեգին Ս . Եպիսկոպոսուն :

Ինչպէս յայտնի է 1916-էն իլիր Գալիֆորնիան ցանկուա

թիւն յայտնած էր անջատուելու Ամերիկայի Առաջնորդական վիճակին եւ ունենալու իր կազմակերպուած ուրոյն Առաջնորդութիւնը : Այս մասին Երեսփ . Ժողովը իր համաձայնութիւնը է ժամանակակին :

Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Ս . Կաթողիկոսը նոյեմբեր 28 , 1927 թուակիր եւ 1022 համար կուգա կով հրահանգած էր Գալիֆորնիոյ բաժանումը , որով Կեդր . Վարչութիւնս վերջնականապէս անջատուած նկատեց Գալիֆորնիան եւ այս առթիւ յատուկ խորհրդակցութիւններ ունեցաւ Գալիֆորնիոյ նորընտիր Առաջնորդ , Տ . Գարեգին Ս . Եպիսկոպոսի հետ , որու Նիւ Եորք ժամանումի եւ մէկնումի առթիւ Առաջնորդաբանի կողմէ եղաւ պատշաճ ընդունելութիւն :

Համաձայն եղած խորհրդակցութեան եւ Գալիֆորնիոյ Ս . Առաջնորդ Հօր յատուկ ցանկութեան , Գալիֆորնիան ուշափ ալ բաժնուած իրաւապէս , այնուամենայնիւ պիտի մնայ կապուած Ամերիկայի Առաջնորդութեան հետ բարոյական , զործնական եւ համազործակցական կապերով : Բնուգունուած է որ Գալիֆորնիոյ վիճակի մէջ նկատուին Միացւալ Նահանգաց Երեք նահանգները՝ Գալիֆորնիան , Աւաշինկթիւն եւ Օրէլլին : Յանկալի նկատուած է նոյնպէս միօրինակութիւն մտցնել Երկու վիճակներու սահմանագրական օրէնքին մէջ : Որոշուած է որ թղթակցութիւններով եւ տեղեկագիրներու փոխանակումով իրազեկ պահուին Երկու Առաջնորդներն ու Կեդր . Վարչութիւնները :

Նիւթական , հաշուական եւ յարակից խնդիրներ Կեդր . Վարչութիւնս կազմեց եւ թեմերուն հաղորդեց թեմական տուրքերու բաշխումը :

Թեմական տուրքերու ընդհանուր զումարն է §6,105 , որ Երեսփանական ժողովի նախատեսած §7,000-ի զումարէն չուրջ §1,000 պակաս է : Այս տարբերութիւնը կը գոյանայ մասամբ Գալիֆորնիոյ բաժանումին հետեւանգով , մասամբ ալ նուազագոյնը պահանջելու եւ ստանալու քաղականութեան պատճառով :

Կեդր . Վարչութեան որոշումով եւ Տնտեսական Ժողովի գիւնանի ստորագրութեամբ Երեք անդամ ըրջարերական համակներով գիմումներ եղած են Հոգարարձութեանց , իրենց հին պարագերու կարգադրութեան եւ մկրտութեանց

ու պատկներու Առաջնորդարանի բաժիններու վճարման համար : Կը ցաւինք ըսելու որ եղած զիմումները եւ մասնակի աշխատանքները բաւարար արդիւնք չեն տուած եւ այդ պատճառով ալ մեր պահանջները կը մնան առկախ , իսկ պարտքերու գումարները կը մեծան ժամանակի ընթացքին :

Կացութիւնը գալմանելու , Առաջնորդարանը նիւթապէս կազմութելու եւ ծրագրուած կրթական եւ յարակից խընդիրներուն ընթացք տալու կարելիութեան նպատակով Կեզ . Վարչութիւնս երկու անգամ գիմեց հանգստակութեան . առաջինը փորձուեցաւ Առաջնորդարանը Նիւ Եորք փոխադրելու առթիւ եւ սակայն փորձը իր սազմին մէջ իսկ փակուեցաւ , որովհետեւ ընդունելութիւն չգտաւ սակաւաթիւ աղայիններու եղած գիմումը եւ Յանձնախումբի անգամ հրաւիրուած երկու յարգելի պղայիններ խորհուրդ տուին յետաձել եւ նոյն իսկ փակել ձեռնարկը :

Իսկ երկրորդ անգամ նախնական խորհրդակցութիւններէ եւ սկզբունքային ճշգումներէ յետոյ , մասնաւորաբար Ս . Առաջնորդ Հօր ջանքերով , հնարաւոր եղաւ ունենալ լայն խորհրդակցական ժողով մը , 1928 Մարտ 19-ին , Պ . Ա . Գորակէօլեանի գրասենեակը , ուր հրաւիրուած 25-է աւելի աղայիններ արձանագրուեցան \$1,500-ի գումար մը իրրեւ նույիրատուութիւն : Նոյն ժողովի մէջ եղած թելագրութեան համաձայն , Կեզը . Վարչութեան որոշումով կաղմուեցաւ հանգանակիչ Յանձնախումբ մը , որուն անգամներն են Պ . Պ . Յակովալեան , Մ . Քիլէրձեան , Մ . Անդրէսեան , Յ . Պարոյեան եւ Տ . Մասարեան : Այս կարգմին վրայ վերջէն աւելցուեցաւ նաեւ Տ . Մերովք Քհնյ . Ներշապուհ :

Հանգանակիչ Յանձնախումբը ցարդ Կեզը . Վարչութեան յանձնած է §850 , եւ կը շարունակի իր վրայ գրուած պարտականութիւնը :

Կեզը . Վարչութեանս հաշուական ըրջանը կը սկսի 1927 Մայիս 1-էն մինչև 1928 Հոկտ . 1 , որով հաշիւը պէտք է նկատի ունենալ ըստ այնմ , մէկ տարի եւ 5 ամսուան համար : Բայտ կազմուած հաշուեկչուի մեր ելեմուտքը կը պարկերանայ ըստ հետեւեալին . Մայ 1 - 27 Յուլիս , փոխանցման ըրջան ըլլալով , գրամական գործառնութիւնները կատարած է նախորդ գանձապահ Պ . Ա . Պաղտասարեան :

## ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱԴՎԱՅՐԱԿԱՆԻ

1927 Մայիս 1-ին - 1928 Հոկտեմբեր 1

### Մուտք

Նայսորդ շրջանին պատրաստ դրամ	1,140 · 60
Առաջնորդական տուրքերէ	3,300 · 33
Փակի վկայագրերէ	440 · 00
Մկրտուրեան վկայագրերէ	1,496 · 50
Նուէր եւ աւանդ	200 · 00
Մայր Արուի համար եղած նուէրներէ	1,400 · 00
Ս . Փրկչեան Հիւանդանոցի Օրացոյցներէն	213 · 80
Հանգանակներէ	414 · 94
Առաջնորդարանի 1926-ի հանգանակուրենին , Պրե . Քըրքի դեկալարութեամբ	1,060 · 00
Վկայագրերէ	175 · 00
	9,841 · 17

### Ելք

Սրբագան Առաջնորդ Հօր քոչակին ի հաշիւ	2,883 · 50
Քարտուղար Տ . Բաշալեանին քոչակին ի հաշիւ	2,335 · 00
Դիւանական ի գրասենեակի ծախս եւ	
Առաջնորդարանի փոխադրութեան	1,634 · 46
Վարչուրեան անդամունք իին եւ նոր համբու ծախսեր 508 · 60	
Տպագրական	114 · 30
Գնուած կարասիք	100 · 00
Զանգան ծախսեր	236 · 40
Ազգային Հիւանդանոցի դրկուած , ի հաշիւ Օրացոյցներու	343 · 60
Մայր Արու դրկուած	1,108 · 50
Եկեղեցականներ պատրաստելու համար պահեստի դրամ	350 · 00
	9,614 · 36
Պատրաստ դրամ ի նոր հաշիւ	226 · 81
	9,841 · 17

Մեր պաշտօնավարութեան առաջին շրջանին պարտաւորուած եղանք միացնել բոլոր նպատակներուն համար եղած առձեւն գումարները մէկ սնառուկի մէջ, ըստ նախընթացին, եւ անոր համեմատ կատարել հաշուական գործառնութիւնները. բայց յետոյ կարգադրուեցաւ որ յատուկ նոպատակներու համար եղած գումարները հնարաւոր չափով առանձնացուին եւ պահուին անձեռնմխելի:

Քննելով Պ. Տ. Քըրքի վարած \$100,000-ի հանգանակութեամբ նախատեսուած նպատակները եւ ստացուած արդիւնքը, §1,296.65, նպատակայացմար նկատուեցաւ եղած գումարը ամբողջութեամբ յատկացնել Առաջնորդարանի անմիջական պէտքերուն:

Առաջնորդարանի նիւ Եսրք փոխադրութեան համար Երեսի. Ժողովի կողմէ նախատեսուած էր \$1000.00: Ուզգակի փոխադրութեան համար ծառուած է §255.20, իսկ առթիւ քարտուզար Պ. Տ. Փաշալեանի ապրեթոշակին վրայ յաւելում եղած է տարեկան միանուադ \$300.00, ըսկանել 1927 Մայիս 1-էն, վերջին տարին Պ. Քարտուզարին շաբաթականն ընդունելով \$35.00:

Առաջնորդարանի ներկայ, 1928 Հոկտ. 1-ի կացութիւնն է, ըստ նիւթեականի:

### ՄԵՐ ՊԱՐՏՔԵՐԸ

Սրբազն Առաջնորդին	\$5871.99
Քարտուզար Պ. Ա. Փաշալեանին	723.50
Ազգ. Հիւանդանցին (օրացոյցներ)	90.25
Մայր Աքոն, Ս. Էջմիածնին	180.15
Տ. Արիկ Քինչ. ին, (նախկին քարտուզար)	113.68
Տպարանական	97.25
Զանազան վնարելի նանապարհածախսեր	
Եւ փոքր գումարներ, շուրջ	400.00
<hr/>	
Գումար	\$7476.82

Ուու փոխարէն Առաջնորդարանս թեմական յետնեալ տուրքերէ եւ վկայականներու հաշուէն Հողարարձութիւններէ կը պահանջէ 22,000 տոլար: Դժբաղարար այս պահանջի կարեւոր մէկ մասը անդանձելի է:

Պատկ. Երեսի. Ժողովի որոշումները. Կեղը. Վար-

չութիւնս մասնաւոր հոգածութեամբ գործադրած՝ 1927 Մայիս 15-16ի Երեսի. Ժողովի որոշումները.՝

1) Երեսի. Ժողովի արձանագրութեանց, արոշումներու եւ Կեղը. Վարչութեան, Կրօն. Ժողովի ու Ս. Առաջնորդի Հօր անդեկագրերու ամփոփումները եւ հաշուական տեղեկատուութիւնները իրեւ գրքոյէ ապագրուած եւ զրբկուած են բոլոր Երեսի ապագրուածներուն, հոգարարձութեանց եւ մամուլին:

2) Քննուած է Պ. Ա. Նալբանդեանի գէմ Թորյ Ն. Ե. Էն դրկուած հանրագրութեամբ արձարծուած խնդիրը: Կեղը. Վարչութիւնս նկատի ունենալով եղած քննութեան արդիւնքը եւ Պ. Ա. Նալբանդեանի գրաւոր եւ բերանացի յայտարարութիւնները, զտաւ որ Պ. Ա. Նալբանդեանը կրնայ պահել իրաւունքները անարգել:

3) ՄԵծ գժուարութեամբ կարելի եղաւ իր ժամանակին, 1927 Յուլիսի սկիզբը, Առաջնորդարանը փոխադրել նիւ Եսրք եւ գրասենեակ ունենալ 156 — 5th Avenue, ներկայանալի եւ ամէն տեսակէտով յարմար իրարու կից Երկու սենեակներու մէջ, ամսական \$65.00 վարձքով:

4) Շարք մը յաջորդական նիստերու մէջ մասնաւոր ուշադրութեամբ քննուեցան վերաքննեալ Սահմանադրութեան նախագծի 75-100րդ յօդուածները, համաձայն Պատկ. Երեսի. Ժողովի կողմէ Կեղը. Վարչութեանս տրուած լիազօրութեան:

Վերաքննուած Սահմանադրութիւնը Յունիս 5, 1928 թուակիր պաշտօնագրով ներկայացուած է Ն. Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Հայրապետին, ի հաստատութիւն: Տակաւին պատասխան մը ստացած չենք:

Այս առթիւ Պատկ. Երեսի. Ժողովին կը ներկայացնենք հետեւեալ կէտերը ի տեղեկութիւն.՝

Ա.) Նախագծի 84-րդ յօդուածի մէջ յիշուած ազգային տուրք բացատրութիւնը տարեկան տուրք-ի փոխուած ըլլալով, ըստ այնմ փոխուած է նաև 71 եւ 72-րդ յօդուածներու մէջ յիշուած ազգային տուրք բացատրութիւնը, տարեկան տուրքի, այն նկատումով որ ազգային տուրքի զեկավարութեան գործը պէտք է պատկանի Առաջնորդարանին, իսկ տարեկան տուրքերը, իրր անդամական վճար, պէտք է պատ-

կանին հոգաբարձութեանց :

Բ.) Նախադի 84-րդ յօդուածին վրայ աւելցած է իրրեւ նախօթութիւն - «Իւրաքանչիւր թեմ կ'ունենայ իր անդամական ժողովը, բաղկացած իրաւասու պղղայիններէ. անդամական ժողովի իրաւոնքներն ու պարտականութիւնները ճշգուած կ'ըլլան ներքին կանոնագրին մէջ :»

Գ.) Նախադին մէջ վերաքննութեան խնդիրը նկատի առնուած ըլլալով կեղր. Վարչութիւնս աւելցուց մասնաւոր յօդուած մը՝ այսպէս. «Յօդ. 100. - Սահմանադրութեանս վերաքննութեան իրաւոնքը կը պատկանի Երեսփոխանական ժողովին: Փոփոխութիւնները կրնան առաջարկուիլ կեղր. Վարչութեան եւ կամ Երեսփոխաններու կողմէ եւ երբ ըստանան Երեսփ. Ժողովի երկու-երրորդի քուէն, կը ներկայացուին Ամենայն Հայոց Հայրապետին, ի հաստատութիւն :»

Դ.) Իսկ միւս յօդուածները ընդունուած են մասնակի եւ փոքր փոփոխութիւններով: Որպէսզի ամբողջութիւնը պարզ ըլլայ, կը կարգանք 75-100 յօդուածները. - (Տես Սահմ. օրինակ):

5.) Կեղր. Վարչութիւնս նախանձախնդիր ըլլալով հանդերձ Երեսփ. Ժողովի որոշումներու գործադրութեան Ազատ Եկեղեցիի շարժման եւ այդ առթիւ Հայաստանի կառավարութեան դիմում կատարելու բանաձևի մասին, իրրեւ Գործադիր Մարմին, միաձայնութեամբ ընդունեց որոշ վերապահութիւն:

Ազատ Եկեղեցիի շարժման դէմ՝ արձանադրութեանց տարագրուած զբքոյիը եւ մամուլի մէջ եղած տեղեկութիւնները բաւական նկատուեցան, քանի որ այդ շարժումը Ամերիկայի եւ առ հասարակ արտասահմանի համար որեւէ լուրջ նշանակութիւն ստացած չէր:

Իսկ Հայաստանի կառավարութեան դիմում մը, նկատի ունենալով հանգամանքները, անժամանակ նկատուեցաւ:

6.) Կեղր. Վարչութիւնս զբաղեցաւ նաեւ Շարժական Օծուած Վէմի վրայ Պատարագ մատուցանելու հարցով: Դիմում եղաւ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին Մայիս 8. 1928 պաշտօնագրով, Ամերիկայի համար բացառիկ արտօնութեան խնդրանքով: Այս հարցը կեղր. Վարչութեանս օրակարգը անցած էր անկախորէն եւ կեղր. Վարչութիւնս

դիմումը կատարեց՝ նկատի ունենալով սկզբունքային եւ զործնական տեսակէտները, ինչպէս նաև 1925-ի Երևափ ժողովին յատուկ որոշումը:

Մէր դիմումին պատասխանը առակաւին ստացած չենք:

Երեսփոխանական ժողովին որոշումներուն հետ անմիջական առնչութիւն ունեցող այս խնդիրներէն զատ մէր օրակարգին վրայ ունեցանք եւ տակաւին ունինք չարգ մը բակարգին վրայ ունեցանք եւ տակաւին առնուած են՝ 1) Օտար Եւրայատուկ ինդիբները. Նկատի առնուած են՝ 2) Ս. Առաջնորդ Զօր իրեւ Պատուիրակ World Conference of Faith-ին, Լօզան, Երթալու մասին Վեհ. Հայրապետի կարգադրութիւնը, 3) Հայկական Մշակոյթի Օր, որ պիտի առնուի ամսուս 14-ին, 4) Զանազան նորաստի դիմումներ Պուլկարիային, Սիւրիային, Պէրսէրեան Վարժարանի համար եւլն ., եւլն .: Դժբաղդաբար Առաջնորդաբանը ի վիճակի չէր գործնական օգնութիւն մը լնելու, հակառակ այն գնահատելի փաստին որ Ամերիկան միշտ ալ առատաձեռն եղած է մէր գժբախտ բեկորներու եւ աղէտեալներու օգնութեան դործին: Այնուամենայնիւ եղած դիմումներու առթիւ տըրուեցան խորհուրդներ եւ մաս մը լներկայացուցինք Հ. Բ. Բ. Միութեան ուշազրութեան:

Այս խնդիրներու շարքին կը փափաքինք մասնաւոր կերպով տեղեկագրել Մայր Աթոռին օգնելու խնդիրը. -

5.) Մայր Աթոռի հիւրական կացութիւնը ծանօթէ: Հուեւոր Գերազոյն Խորհուրդը մեզ եւս դիմած ըլլալով, կեղր. Վարչութիւնս փոխադրեց պատրաստ գումարը աւելիով. Վարչութիւնս փոխադրեց պատրաստ գումարը տեղի ունեցաւ մասնակի հանդանակութիւն մը, որ պիտի շարունակուի որոշ ծրագրով: Ղրկուած է §1060.50, կը մնայ պատրաստ՝ \$180.15, եւ պարբերաբար պիտի ղրկուե:

Ա. Առաջնորդ Տ. Տիրայր Արքեպ.ի հրաժարականը. -

Ա. Առաջնորդ Զօր Օռոսոս 14, 1928-ին ներկայացուց հրաժարական, գտնելով որ այլեւս չի կրնար օգտակարապէս ծառայել, եւ գործէ ձեռնթափ եղաւ: Կեղր. Վարչութիւնս որոշեց այդ հրաժարականը ներկայացնել Պատկ. Երեսփ. ժողովին, ըստ որում Առաջնորդի հրաժարականը մէրժելու կամ ընդունելու իրաւասութիւնը կը պատկանի Երեսփոխականի համար անցած էր անկախորէն եւ կեղր. Վարչութիւնս

խանական ժողովին :

Մինչ այդ, սակայն, կեդր. Վարչութիւնս որոշած է ընդունիլ Ս. Առաջնորդ Հօր ամսավճարի իրաւունքը մինչեւ Երեսփ. Ժողովի որոշումը եւ նկատի ունենալով Երեսփանական ժողովի մօտալուտ գումարումը՝ ըրած է կարգադրութիւններ Առաջնորդարանի գործերու բարուրք դեկագրադարձեան համար :

Ներքին տարակարծութիւններ — Մեր պաշտօնավարութեան ընթացքին ներքին տարակարծութիւններ ծագեցան կրօն. Ժողովի իրաւասութեանց մասին, շարք մը խնդիրներու առթիւ. այդ պատճառով ալ անհրաժեշտ նկատուած էր խնդիրը ներկայացնել Պատ. Երեսփ. Ժողովին ի տնօրինութիւն։ Սակայն ուրախ ենք յայնալու որ կեդր. Վարչութեանս վերջին նիստին, Հոկտ. 3, 1928, տարակարծութիւնները հարթուած եւ ընդհանուր հիմնական տևակիտներ ճշգրտած են, որով կեդր. Վարչութիւնս կը ինդրէ օրակարդէն հանել «Կեդր. Վարչութիւնն եւ կրօն. Ժողովի փոխարարերութեանց ինդիրը»։

ԾԱՆՈԹ. — Երեսփ. Ժողովի վիճաբանութեանց ընթացքին, կեդր. Վարչութեան տեղեկաբերը յայտարարէց որ տարակարծութիւնները Ս. Առաջնորդ Հօր, կրօնական եւ աշխարհական անդամներու միջեւ եղած են հետեւեալ կետերու մասին։

1) Հոգաբարձութեանց վաերացման առքիւ, որ յառաջ եկած էր մասնաւորաբար Շիքակօյի խնդրով։

2) Ամուսնալուծմանց իրաւասութեան մասին, զոր կրօնական ժողովը իրեն վերապահուած կը նկատէր։

3) Եկեղեցականներու ոչ-կրօնական յանցանքներու այսինքն պարզ նիւթական, բարոյական եւ վարչական գեղծումներու բննութեանց եւ կարգադրութեանց մասին։ Այս խնդիրները բննուած եւ վեռուած են կրօն. Ժողովի կողմէ։

4) Շարժական վէմի առքիւ, հակառակ Երեսփ. Ժողովի որոշ տեսակետին եւ կեդր. Վարչութեան դիմումին, կրօն. Ժողովի կողմէ վէհ։ Կարողիկոսին եղած չէզոքացնող ցրութեան առքիւ։

5) Վերաբննուած Սահմանադրութեան մասին կրօն. Ժողովի անդամներուն եւ Ս. Առաջնորդ Հօր կողմէ վէհ։ Հայ-

րապետին դրկուած գրութեան եւ յարակից նոր Սահմանադրութեան առքիւ։

Տեղեկաբերը ըստ որ ինքը ուրախութեամբ կը յայտարարէ քէ կեդր. Վարչութեան վերջին նիստին միաձայնութեամբ համախոհութիւն յայտնուած է որ յետ այսու առաջին խնդիրին ընթացք պիտի տրուի Սահմանադրութեան համաձայն։ Երկրորդ եւ երրորդ խնդիրները պիտի գամ կեղծութիւններ կամ վերանայուին կեդր. Վարչութեան սեղանին, իսկ չորրորդ եւ հինգերորդ խնդիրները պիտի վերանայուին կեդր. Վարչութեան ժողովին մէջ։

Առաջարկներ եւ գանձագան խնդիրներ. — Պատէկ. Երեսփ. Ժողովի ուշագրութեան եւ տնօրինութեան կը ներկայացընենք շարք մը առաջարկներ, որոնց մէկ մասը արդէն չօշափուած եւ բացարուած է այս տեղեկադրին մէջ։

1) Ս. Առաջնորդ Հօր հրաժարական, որ արդէն օրակարդի նիւթ է։

2) Կտրուկ հրահանդ եւ որոշումներ թեմական տուրքերը եւ պատկերու եւ մկրտութեանց Առաջնորդարանի բաժինները վճարելու մասին թերացող հոգաբարձութեանց մասին։

3) Ակդրունքային որոշում Պատունի հոգաբարձութեան և Հովիւի ցոյց տուած վերաբերումի եւ յարաբերութեանց խղումի մասին։

4) Յատուկ հրահանդ Հովիւններու պաշտօնավարութեան շրջանի տեւողութեան մասին։ Երկո՞ւ թէ չորս տարի, պատահակա՞նի թէ մշտական շրջան։ Այս կէտը նախատեսուած չէ ոչ գործադրուող Սահմանադրութեան եւ ոչ ալ վերաբերնեալ ուրուագծին մէջ։

Վերջացնելէ առաջ մէր տեղեկադրիր ուրախութեամբ կարձանագրենք այն եռուն կեանքը որ վերջին տարիներ կը զարգանայ Ամերիկայի մէջ, ազգային, եկեղեցական եւ կրթական ուղղութեամբ։ մէծ ու փոքր գաղութներու մէջ մէր ժողովուրդը աւելի սերտ կապերով եւ նախանձախընդուրութեամբ կը հոգախմբութիւններ եւ հոգաբարձութիւններ կը կազմուին եւ գաղութը լուրջ մտահոգութիւնն ունի նոր սերունդի զատուիա-

բակութեան մասին:

Այս գաղութը իր կարօտ եւ կոտորակուած արենակից-ներուն օգնելու զմայլելի զոհարերութեան հետ կուզբնթաց, հետզհետէ կը խորացնէ նաեւ իր իսկ սեփական կարիքներու լրացման խնդիրը: Այս պարագան աւելի չեցուած կերպով կը ծանրացնէ պարտականութիւնը Ազգային Իշխանութեան՝ որ պէտք է յարատե եւ խոհուն քաղաքականութեամբ, միացեալ ոյժերով ու ջանքերով դիմագրաւէ կացութիւնը՝ օգտակարապէս գործելու համար:

Կեդր. Վարչութիւնս յաւակնութիւն չունի իր պարտականութիւնները լրիւ կատարած ըլլալու մասին. սկզբնական շրջանի մեր լաւագոյն առաջադրութիւնները մասսամբ կասեցան բացառիկ եւ հարկադրիչ աշխատութիւններով, որոնք անտարակոյս պէտք է կատարուած ըլլային աւելի կանուխ: Շարք մը խնդիրներ դժբախտաբար շատ ժամանակ եւ ոյժ խլեցին: Համոզուած ենք սակայն որ Պատկ. Երեսի. Ժողովը իր նոր որոշումներովը եւ հարահանգներովը կը հարթէ դժուարութիւնները եւ իր վստահութեամբը կը քաջալիք մեզ՝ գործը շարունակելու; մինչեւ որ նոր պարագաներ ներկայանան, Սահմանադրութիւնը հաստատուած սահմանք եւ Պատկ. Երեսի. Ժողովը գումարէ իր յաջորդ նիստը:

Նիւ Ենրք 7 Հոկտեմբեր, 1928

## ԹԵՄԱԿԱՆ ՏՈՒՐՔ

1927 Տ.Մ.Ի.Ո.Ց

1. Ասքորիս 50, 2. Պինկիմբըն 60, 3. Պուրոն 600,
4. Պուէնոս Այրէս 50, 5. Քանատա, 6. Շիֆալո 150,
7. Քլիվլան 75, 8. Տիբրոյը 400, 9. Տիբրոյը-Տէլըրի 200,
10. Հարդֆրուտ 60, 11. Հէյվիրիլ 50, 12. Խնտիկ Օրչէնս 50, 13. Քընչա 50, 14. Լորենս 120, 15. Լովէլ 50, 16. Կրանիդ 50, 17. Նիւարք 60, 18. Նիւ-Ենրք 500, 19. Նիւ-Ենրք 30-րդ Փողոց 500, 20. Նիւ Պրիթէն 120, 21. Նիալարա Ֆօլս 50, 22. Ֆիլատէլիս Նորդի 300, 23. Ֆիլատէլիս Ուէստ 300, 24. Բօրդէնս 50, 25. Բրավիտէնս 600, 26. Ռէյսին 120, 27. Սօ. Միլլօֆի 120, 28. Սրբինկիֆիլտ 50, 29. Սիրապիս 100, 30. Թրօյ 200, 31. Եռունիթն Սիրի 250, 32. Ռուլման 100, 33. Ուստրը 500, 34. Վօֆէկը 60, 35. Ռիչմոն 60, 36. Սօ. Բօլո - Պրազիլ 50:

## ԵԿԵՂԵՑԻ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՎԻՒՆԵՐ

- Գեր. Տ. ՇԱԶԼ Ծ. ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ, 397 Shawmut Ave.  
Boston, Mass.
- Գեր. Տ. ՋԵԻԹՆԴ ՎՐԴ. ՄԱՐԴՈՒԿՅԵԱՆ, Armenian  
Church, Jefferson St., Providence, R. I. ~~S. ԵՐԵՎԱՆ~~ ՀԵՂԵՑԻ ՀՈՎԻՒՆԵՐ
- Գեր. Տ. ՄԱՄԲՐԵՔ ՎՐԴ. ԳԱԼՅԱԵԱՆ, 447 New York Ave.,  
Union City, N. J. ~~523-3423 st. Union city, N. J.~~
- Գեր. Տ. ԽՈՐԷ ՎՐԴ. ԼԱԶԱՐԵԱՆ, 909 Michigan Ave., So.  
Milwaukee, Wis.
- Գեր. ~~Տ. ԱՅՏԻՄ ՎՐԴ. ԼԱԶԱՐԵԱՆ~~, 18 Fourth St.,  
Troy, N. Y.
- Արժ. Տ. ԱՅԲՈՎԵԼ Ա. ՔՀՅ. ՆԵՐՇԱՊՈՒՀ, 221 E. 27th St.  
New York, N. Y.
- Արժ. Տ. ՊԵՏՐՈՍ ՔՀՅ. ՅԱԿՈԲԵԱՆ, 221 E. 27th St., New  
York, N. Y.
- Արժ. Տ. ՅԱՐՈՒԻԹԻԻՆ Ա. ՔՀՅ. ՄԱՐԳԻՍԵԱՆ, 578 W. 187th  
St., New York, N. Y.
- Արժ. Տ. ՄԱՍԹԵՈՍ ՔՀՅ. ՀԵՐԻՄԵԱՆ, 207 E. 30th St., New  
York, N. Y.
- Արժ. ~~Տ. ԱՅՏԻՄ ՔՀՅ. ՌՈՋԻՆԵԱՆ~~, 6006 Walnut St., Phil-  
adelphia, Pa.
- Արժ. Տ. ԼԵՆԻ ՔՀՅ. ՓԱՖՈՒԼԵԱՆ, 16th & Oxford Streets,  
Philadelphia, Pa.
- Արժ. Տ. ԱԹԻԿ ՔՀՅ. ԾՈՅՑԻԿԵԱՆ, 65 Laurel St., Worcester,  
Mass.
- Արժ. Տ. ՎԱԶԱՆ ՔՀՅ. ԿԻԼԻՏԱԼԵԱՆ, 2212 Foster Ave.,  
Chicago, Ill.
- Արժ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՔՀՅ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, 1619 Lawrence  
Ave., Chicago, Ill.
- Արժ. Տ. ԵՂԻՋԱՐ ՔՀՅ. ԱՇՃԵԱՆ, 397 Shawmut Ave.,  
Boston, Mass.
- Արժ. Տ. ՎԱՐԴԱՆ ՔՀՅ. ԴԱԼԻԹԵԱՆ, 1121 Geneva Street,  
Racine, Wis.
- Արժ. Տ. ՄԱՍԹԵՈՍ ՔՀՅ. ՄԱՆԻԿԵԱՆ, 43 King St., Toronto,  
Ont., Canada.
- Արժ. Տ. ԵՂԻՋ ՔՀՅ. ԳԱՍՊԱՐԵԱՆ, 3 Auburn St., Lowell,  
Mass.
- 519 w. York St. Philadelphia

- Արժ. Տ. ՂԱԶԱԿ ՔՀՅ. ԳԱԶԱՆՁԵԱՆ**, 160 Tremont St., New Britain, Conn.  
**Արժ. Տ. Գ. ՔՀՅ. ԹԱՅՃԵԱՆ**, Collectividad Armenia, 226 San Jerenimo, Cordoba, Argentine.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԱՅՑԵԼՈՒ  
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԵ ԿԸ ՍՏԱՆԱՆ ՀՈԳԵՒՈՐ  
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- ԱԱԹՈՐԻԱՅՅԻ**.—S. Chirovian, 25-10 Potter Ave., Astoria, L. I.  
**ՊԻՆԿԵԼՄԹԵՆԻ**.—19 Main St., Binghamton, N. Y.  
**ՊՐԻՏԱՐԻ**.—1106 Braddock Ave., Braddock, Pa.  
**ՊՐԻՃԲՈՐԹԻ**.—438 Conn. Ave., Bridgeport, Conn.  
**ՊՐԻՃՎՈՐԹԻ**.—57 Broad St., Bridgewater, Mass.  
**ՊՈՒԷՐՈ ԱՅՐԵԱՄ**.—1537 Calle San Juan, Buenos Aires, Argentine.  
**ՊԼՅՈՅՅԻ**.—P. O. Box 711, Buffalo, N. Y.  
**ՉԼԻՍԻ**.—18 Fifth Ave., Chelsea, Mass.  
**ՔԼԻՎԼԵՆՏԻ**.—c/o S. Sisian, 1818 Prospect Avenue, Cleveland, Ohio.  
**ԿՐԱՆՏ ՌՈՅԹՈՅԻ**.—c/o G. Mullian, 1059 Turner Ave., Grand Rapids, Mich.  
**ՀԱՐԹՋՐՏԻ**.—c/o A. Derderian, 99 Putnam St., Hartford, Conn.  
**ՀԵՎՐՃԻԼԻ**.—42 Pilling St., Haverhill, Mass.  
**ԻՆՏԻԼԻ ՕՐՉԼՐՏԻ**.—44 Orchard St., Indian Orchard, Mass.  
**ՔԵՈՇԱՅԻ**.—6226 - 14th Ave., Kenosha, Wis.  
**ԼԻՆԻ**.—c/o Dr. L. Hagopian 26 So. Common Street, Lynn, Mass.  
**ԼՈՎԼԻ**.—c/o H. Zarifian, 36 Jackson St., Lowell, Mass.  
**ՄԵՍԻՆԱՅԻ**.—c/o Sh. Tarpinian, 252 Center St., Massena, N. Y.  
**ՄԻԼՅԼՐՏԻ**.—7 West Pine St., Milford, Mass.  
**ՆԻԻ ՊՐԻԲՈՐԹԻ**.—2 Atkinson Place, Newburyport, Mass.  
**ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼԱՄ**.—943 Cleveland Ave. Niagara Falls, N. Y.  
**ԲԱՅԹԼՐՈՒԼԻ**.—10 Thomas St., Paterson, N. J.  
**ԲՈՐԹԼԵՆՏԻ**.—c/o Der Arsenian, 514 Congress St., Portland, Me.

- ԻԻՉՈՒԼՇԻ**.—112 N. Meadow St., Richmond, Va.  
**ԻՄԹ ՍէՆԹ ԼՈՒՀԶԻ**.—1424 E. B'way, East St. Louis, Ill.  
**ՍէՆԹ ԲՈԼԻ**.—c/o G. Nakashian, 217 Moutrose Pl., St. Paul, Mines.  
**ՍԲՐԻՆԿՅԻԼՇԻ**.—c/o N. Tashjian, 919 State St., Springfield, Mass.  
**ՍԻՐԱԲԻՍԻՍԻ**.—410½ Burnet Ave., Syracuse, N. Y.  
**ԵՐԻԹԻԲՍԻ**.—P. O. Box 75, Utica, N. Y.  
**ՎՈՐԵԿՅԻՆԻ**.—934 So. Genesee St., Waukegan, Ill.  
**ՎԼՍԹ ԲՈՒԼՄԵԽԻ**.—11929 Wallace St., West Pullman, Ill.  
**ՎԼՍԹ ԱԼԻՍԻ**.—c/o S. Gurunian, 434 - 55th Ave., West Allis, Wis.  
**ՎԱՅԹԼՆԱՎԼԻԻ**.—200 Church St., Whitinsville, Mass.

ՀՈՎԻԻՆՆԵՐ, ՈՐ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԶՈՒՆԻՆ ԵՒ ՄԻԱՅՆ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆ

- Արժ. Տ. ՊԵՏՐՈՍ ՔՀՅ. ՎԱՐԴԱՆԵԱՆ**, 181 Bidwell Ave. Jersey City, N. J.  
**Արժ. ԴԱՒԻԹ ՔՀՅ. Տ. ԱԻԵՏԻՍԵԱՆ**, 1712 State St., Granite City, Ill.  
**Արժ. Պ. ՔՀՅ. ՄԱՄԲՐԵԿԵԱՆ**, 15371 Welland Ave., Detroit, Mich.  
**Արժ. ԳԱԲՐԻԵԼ ՔՀՅ. ՍԱՄՈՒԵԼԵԱՆ**, Armenian Benevolent Society, 15 Rue Florencia de Ambren, Paulo, Brazil.  
**ԱՆՊԱՇՏՈՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ**  
**Արժ. ՈՈՒԲԵՆ ՔՀՅ. ԳԱԲԻԿԵԱՆ**, 229 Howland St., Astoria, L. I. (N. Y.)  
**Արժ. ԵՂԻՇԵ ՔՀՅ. ԳԱԼԻՆՁԵԱՆ**, 200 Highpoint Ave., Weehawken, N. J.  
**ԳԵՐ. ՎՈՀՐԱՄ Ե. ՎՐԴ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ**, 1818 Prospect Ave., Cleveland, Ohio.  
**Արժ. ՄՈՎԱԼՈ ՔՀՅ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ**,

## ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ

ՀՐԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԿԱԶՄԸ

1. ԱՍԹՕՐԻԱ. - Տեարք թ. Զօղեան, Յ. Պարսամեան, Տօքթ. Մ. Մաթիս, Գ. Գուրումճեան, Ա. Բաբերդեան, Վ. Հէքիմեան:
2. ՊԻՆԿԱՋՄԹԸՆ. - Տեարք Ճ. Հալածեան, Կ. Նամառեան, Մ. Գալէմճեան, Ք. Բէջօյեան, Հ. Բարունակեան:
3. ՊՈՍԹՈՂ. - Տեարք Խ. Բաջիկեան, Ղ. Սրապեան, Գ. Իսրաէլեան, Գ. Ժամկոչեան, Մ. Նահիկեան, Տ. Վարդիկեան, Պ. Կարապետեան, Մ. Մուրատեան, Ա. Գառպարեան:
4. ՇԻՖԱԿՈ. - (Առժամեայ) Տեարք Խ. Շահպազեան, Վ. Պէլօնան, Լ. Քաշեան, Կ. Յարութիւնեան, Գ. Օհանեան, Ա. Տօնեան, Բ. Ճաքօպեան:
5. ՔԼԻՎԱԷՆԸ. - Տեարք Բ. Առաւելեան, Յ. Թարխանեան, Տ. Ասատրեան, Ա. Պէննէան, Ա. Սիսեան, Գ. Տէմիրճեան, Ա. Տէր Պաղտասարեան:
6. ՏԻԹՐՈՅԻԹ. - Տեարք Յ. Ապահովի, Շ. Սարափեան, Տօքթ. Անսուր, Յ. Թափրալեան, Յ. Կոնճօհեան, Կ. Մարտիրոսեան, Ա. Տէպէլեան, Գ. Էքիդեան, Ա. Ճանօեան:
7. ՏԻԹՐՈՅԻԹ-ՏԵԿԼՐԻ. - Տեկին Ե. Գաւեիթեան, Տեարք Ա. Մարոյեան, Խ. Գասպարեան, Տօքթ. Կ. Աթթարեան, Ա. Լաճիքեան:
8. ՀԱՐԹՖԼՐԸ. - Տեարք Ա. Տէրտէրեան, Ե. Եղիաեան, Ա. Փէլիլվանեան, Գ. Ժամկոչեան, Կ. Սաչավլեան:
9. ՀԵՅՎՐԻ. - (Հոգաբարձութիւն չունի):
10. ԻՆՏԻՔՆ-ՕՐՉԵՆԸ. - Տեարք Մ. Թորոսեան, Ե. Մեթեան, Մ. Տօնիկեան, Մ. Մըթըլեան, Հ. Տիւրէրեան:
11. ԿՐԱՆԻԹ-ՍԻԹԻ. - Տեարք Ա. Յակոբեան, Գ. Մուշեան, Մ. Քէլիքեան, Մ. Յակոբեան, Ա. Մանուկեան:
12. ՔԸՆՈՇԸ. - Տեարք Լ. Յակոբեան, Ե. Գավուճեան, Ա. Տիւրոսեան, Ե. Պետրոսեան, Ա. Պետրոսեան:
13. ԼՈՎԵԼ. - Տեարք Մ. Բարոյեան, Մ. Մանոյեան, Ո. Պոյաճեան, Կ. Մակարեան, Յ. Կիւրեղեան:


14. ԼՕՐԵՆՍ. - (Նոր լետրութիւն դեռ չէ կատարուած):
15. ՆԻՒԱՐՔ. - Տեարք Տ. Քըրք, Ա. Եսայեան, Կ. Հայկակն, Լ. Պետիկեան, Տ. Պալլուճեան, Յ. Բարունակեան, Հ. Շահինեան:
16. ՆԻՒ ՊՐԻԹԵՆ. - Տեարք Գ. Գէորգեան, Կ. Յակոբեան, Թ. Եաղուպեան, Ա. Կոշկալարեան, Թ. Յարութիւնեան, Յ. Կարապետեան:
17. ՆԻՒԲՈՐԻ. - Տեարք Ա. Մէքայէլեան, Ա. Թորոսեան, Կ. Գալուստեան, Ա. Անանեան, Կ. Եղուեան:
18. ՆԻՒ-ԵՈՐՔ. (27-րդ Փողոց) - Տեարք Ա. Մէրճենեան, Ա. Պօղոսեան, Ն. Փափազեան, Մ. Մինասեան, Պ. Տէրունեան, Ա. Ավտուն, Ա. Արբահամեան, Մ. Մաշմանեան, Ե. Յակոբեան:
19. ՆԻՒ-ԵՈՐՔ, (30-րդ Փողոց) - Տեարք Ա. Բոցիկեան, Յ. Ալպար, Մ. Մէրճանեան, Մ. Պէլէրեան, Պ. Հազարպետեան, Ն. Կոշկարեան, Թ. Մէծառութեան:
20. ՆԻՒ ԵՈՐՔ, (Ար-Թառւն) - Տեարք Գ. Գալէնէրեան, Ն. Մազաքեան, Տօքթ. Այլապեան, Դ. Ազամեան, Օ. Մարտիկեան, Ա. Տէմիրճեան, Յ. Տօնէլեան, Յ. Սրութեան:
21. ՆԻՒԿԱՐՁՅՈՒ. - Տեարք Խ. Թորիկեան, Գ. Կարապետեան, Տիկին Ա. Թովմասեան, Յ. Եղիկեան, Կ. Կապոյեան:
22. ՖԻԼԱՏԵԼՖԻՍ. Ն. - Տեարք Յ. Զալբգեան, Ա. Սահմառեան, Յ. Թաշճեան, Բ. Գաղանճեան, Գ. Կարատուրեան, Յ. Նազարէթեան, Ն. Շամիկեան, Պ. Թէրլեան, Մ. Ճըլկալեան:
23. ՖԻԼԱՏԵԼՖԻՍ, Ո. - Տեարք Տ. Իսպէչարեան, Տօքթ. Նէտիկեան, Հ. Բագրատունի, Ա. Արալանեան, Գ. Մամուչեան, Յ. Թէմօեան, Ա. Գասարճեան:
24. ԲՈՐԴԵՆԸ. - Տեարք Խ. Մանուկեան, Գ. Տէր Արանիեան, Ա. Եղիաեան, Ա. Փափաչեան, Մ. Միրունեան:
25. ԲԻԱՎԻՏԵՆՍ. - Տեարք Խ. Էմիրգեան, Պ. Գալընեան, Ն. Գըգիրեան, Ա. Նուրիկեան, Հ. Նաճառեան, Գ. Տիւրկիկեան, Մ. Գաղանճեան, Յ. Ճորճորեան, Յ. Կարապետեան, Կ. Դանիկեան, Լ. Մըսըրլեան:

26. ՈՒՅՍԻՆ - Տեարք Տ . Ճինկէօղեան , Մ . Ճանիկեան , Վ .  
Տէր Վարդանեան , Ա . Վարդեան , Ա . Լւտոնեան , Գ . Գլւ-  
լափեան , Պ . էքիզեան , Բ . Նիւտիւրեան , Գ . Պուչաքե-  
միշեան :
27. ՈՒՅՍԻՆ - Տեարք Յ . Գարրիչեան , Ե . Գարսեան ,  
Ա . Գրիգորեան , Մ . Կիրակոսեան , Ա . Տատաեան :
28. Ա . ՄԻԼՎՈՅԻ - Մ . Քէջեան , Մ . Աշպալեան , Ե . Ենի-  
տիսեան , Ա . Գարրիչեան , Ա . Հաճինեան :
29. ԱԻՐԱՔԻՒԶ - Տեարք Խ . Ասկրիչեան , Խ . Մինասեան ,  
Խ . Չուղաղեան , Տ . Տէմիշեան , Մ . Արիկեան :
30. ԱԲՐԻՆԿԻՒԶ - Տեարք Մ . Քիւլինկեան , Ն . Փիլիկ-  
եան , Տ . Օմարթեան , Յ . Խաչիկեան , Գ . ՄԷծարեան :
31. ԹԻՈՅ - Տեարք Մ . Հայրապետեան , Գ . Պալայեան ,  
Թ . Գևարոսեան , Յ . Աղաչարմ , Գ . Տէր Մէսրոպեան ,  
Մ . Ասհաթձեան , Ք . Քերորեան :
32. ԵՈՒՆԻԼՆ ՍԻԹԻ - Տեարք Յ . Պողոսեան , Յ . Թէրիքէճ-  
եան , Մ . Թըրանեան , Կ . Գաղանձեան , Յ . Նորեան , Յ .  
Աղահունի , Ա . Քէջեան , Մ . Տէրոյեան , Ա . Տաղադ-  
եան :
33. ՎՈՅԵԿՈՆ - Տեարք Յ . Թորիկեան , Կ . Էմիրպեան , Ն .  
Բլլուսեան , Գ . Մկրտիչեան , Մանուկ Սեւանեան :
34. ՎՈԹԸՐԹԱՈՒՆ - (Առժամեայ) Տեարք Հ . Ագլեան , Գ .  
Տ . Պողոսեան , Գ . Աբիկեան , Կ . Կարապետեան , Լ . Գրի-  
գորեան :
35. Ո . ՓՈՒԼՄԵՆ - Տեարք Յ . Հալածեան , Յ . Ֆնտրպ-  
լեան , Ա . Նիկողոսեան , Մ . Հաղալմաղեան , Մ . Մէմիք-  
ձեան , Վ . Հաղալմաղեան , Կ . Մողիկեան :
36. ՈՒՍՏՐ - Տեարք Ա . Եազուպեան , Պ . Յարութիւնեան ,  
Տօքթ . Լ . Հիւսիսեան , Ն . Տէրտէրեան , Խ . Անարիկեան ,  
Ն . Նիկողոսեան , Մ . Պոյաճեան , Մ . Տէրտէրեան , Թ .  
Խուլուսեան , Վ . Մանթօսեան :
37. ՔԱՆԱՏԱ-ՀԱՄԻԼԹՈՆ - Տեարք Լ . Բէիկեան , Ա . Ալիք-  
ոսեան , Ա . Աստոտրեան , Տ . Աստոտրեան , Ա . Յա-  
րութիւնեան :
38. ՔԱՆԱՏԱ-ՍԷՆԴԻ ԳԱԹԵՐԻՒԶ - Տեարք Ա . Գրիգորեան ,  
Գ . Խորթոսեան , Հ . Յովսէփեան , Մ . Քաչարեան :
39. ՔԱՆԱՏԱ-ԿՈԼԹ - Ա . Խոչուսեան , Մ . Աստոտրեան , Ղ .

- Մարգարեան , Մ . Զէրգուեան , Գ . Բարսեղեան :
40. ՔԱՆԱՏԱ-ԹՈՄԱՆԹՈ - Տեարք Լ . Պալասեան , Լ . Ա-  
րիաքէսեան , Թ . Առւրէնեան , Ի . Մէֆէրեան , Յ . Յա-  
կոբեան :
41. ՔԱՆԱՏԱ-ՊՐԵՆՏՖՈՐՏ - Տեարք Ե . Մուրատեան , Մ .  
Արիկեան , Գ . Մոնյեան , Խ . Տէրտէրեան , Գէորգ Գալայ-  
ձեան :
42. ՄԵՐՍԻԿՈ - Տեարք Ա . Վարդուկեան , Գ . Գրիգորեան ,  
Ա . Արաչեան , Յ . Կարապետեան , Վ . Մինասեան :
43. ԱՐԺԱՆԹԻՆ-ԳՈՐԾՈՊՈ - (Հայ Գաղութային Միու-  
րին) :
44. ՀԱՒԱՆԱ-ԳՈՒՊԱ - (Հայ Գաղութային Բարեգործական  
Միուրին) :
45. ՊՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ - (Հայ Գաղութեային Կեդրոն) :
46. ՍԱՆ-ԲԱՌԻԿՈ , ՊՐԱԶԻԼԻԱ - Տեարք Ճորճ Թահան-  
եան , Յ . Գայսէրլեան , Գ . Միթարեան , Ն . Պոյաճեան ,  
Յ . Հաղարապետեան , Ղ . Նաղարեան , Մ . Գալայճեան ,  
Յ . Նաքաչեան , Ճ . Բըգկալլեան , Վ . Քէօթէնէճեան , Յ .  
Տէմիրձեան , Ճ . Թահանեան (նախաղահ) :



1. den 26. Februar 1898. 2. den 26. Februar  
1898. 3. den 26. Februar 1898. 4. den 26. Februar  
1898. 5. den 26. Februar 1898. 6. den 26. Februar  
1898. 7. den 26. Februar 1898. 8. den 26. Februar  
1898. 9. den 26. Februar 1898. 10. den 26. Februar  
1898. 11. den 26. Februar 1898. 12. den 26. Februar  
1898. 13. den 26. Februar 1898. 14. den 26. Februar  
1898. 15. den 26. Februar 1898. 16. den 26. Februar  
1898. 17. den 26. Februar 1898. 18. den 26. Februar  
1898. 19. den 26. Februar 1898. 20. den 26. Februar  
1898. 21. den 26. Februar 1898. 22. den 26. Februar  
1898. 23. den 26. Februar 1898. 24. den 26. Februar  
1898. 25. den 26. Februar 1898. 26. den 26. Februar  
1898. 27. den 26. Februar 1898. 28. den 26. Februar  
1898. 29. den 26. Februar 1898. 30. den 26. Februar  
1898. 31. den 26. Februar 1898.



✓



